



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Lin-

151

1999.11

43733-4.2.

ԵԳ

Մարտէյլ, 1 յունիս 1891

Մեծապատիւ Հայրենակից ,

Կը համարձակիմ զրկել Ձեզ Արմենիաի  
խմբագրատան մէջ ծախու գտնուած  
հայրենասիրական և այլ օգտակար  
գիրքերի ցուցակը որի մէջէն կը յուսամ  
թէ պիտի կրնաք ընտրել Ձեր ճաշակի  
և զգացման յարմար գիրքեր :

2219.

Նշանակուած գիներին մէջ հաշուը-  
ւած է նաեւ գիրքերը զրկելու փոստի  
ծախքը, այնպէս որ սրոյ կրնաք գիտ-  
նալ թէ Ձերու զամ գիրքերը բերել տա-  
լու համար ո՞րչափ պէտք է վճարէք ,  
փոստի ծախքի պատճառով առկա ին  
հաշիւներ չունենալով : Ե/մէ ուղէք  
նաեւ որ ապահովագրուած ( recom-  
mandé) զրկուին Ձեր գիրքեր , այդ  
ժամանակ ամէն մէկ ծրարի համար 25



28014-62

Գ

սանթիմ տւելի պէտք է վճարել : Փոս.  
տը չընդունիր 2 քիլոյէն տւելի կշռող  
ծրար :

Յուսայով որ քիչ ժամանակէն Ձեր  
պատուէրներ ստանալու պատիւը կու-  
նենամ, կանխաւ կը ժատուցանեմ Ձեզ,  
Մեծ ապատիւ Հայրենակից, յարգանք-  
ներիս հետ և շնորհակալութիւններս :

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Հասցէ՝

M. PORTOUKALIAN

(France)

MARSEILLE.

29 157

157-60

9

**ԳՐԱՅՈՒՅԱԿ**

«ԱՐՄԷՆԻԱ» Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՀԱՅ ԳԻՒՅԱԶՆՈՒՂԻ ՄԸ (Սպառած) :

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ »

Դ. ԱԶՏՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ  
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՏԱՄ-  
ԲԱՊԵՏԱՅ (Պուլղար ազգին իր ազա-  
տութիւն ձեռք բերելու համար մէկ  
դարէ ի վեր արած ջանքերի խիստ  
հետաքրքրաշարժ նկարագրութիւնն  
է) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ.

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ. — (Հայաս-  
տանցիների պանդխտութեան տխուր  
հետեւանքների մէկ փոքրիկ պատկերը  
կը ներկայացունէ վիպական կերպով : )  
Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳՍՄԱՌ ՔԱՐԻՊԱՆ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՅԱՐԱՆ յետ այբուբենն աւարտե-

լուսն (Մեծանունն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ուստանաւորներէն Յը՝ առանձին տետրակով հրատարակուած են) : 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթիմ.) 10 սանթիմ :

Է. ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.  
(Սպառած)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՒՆՆԵՐ

Ը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԹԻԻՐՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ

ԻՐԵՆՅ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐԵՅ Ա. Մ.

Թիւրքիոյ Հայերին և իրենց դուրացի Թիւրքերի, Քիւրդերի, Չէրքէզների, Ասորիների, Եգիպտացիների, Իրզլուպաշների և այլ ազգերի վրայ վիճա-

կազրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ տրուած են այս տետրակի մէջ : Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգէ բնակիչների թուին մէկ բաղդատական ցուցակը կցուած է տետրակին վերջը : Գինն է 50 սանթիմ (35 սնթիմ.) :

Թ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Ա. ՏԱՐԵԿԱՆ

(1885-86)

Շատեր կը փափաքէին ունենալ Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը. բայց որովհետեւ այդ թիւեր բոլորովին ըսպառած են, նոյն տարեշրջանի մէջ Մ. Փորթուզալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 30ի չափ ամփոփուած են այս Յուշարարի մէջ, մի քանի թրղթակցութիւններով մէկտեղ որոց մա-

սին խօսուած է առաջնորդող յօդուածներին մէջ : Այդ յօդուածների մէջ կան «Տնտեսական հարցեր» (Վանի տրնտեսական վիճակը), «Թիւրքիան չուղեր լսել», «Ի՞նչ պէտք է անել և ի՞նչ կրնանք անել» (Մայրայեղութիւն), «Եւրոպայեան Հայերն և Կ. Պօլսի Պատրիարքարանը», «Պէտք է գծել մեր ծրագիրը», «Մեր ոյժեր համախմբելու մի առաջարկ», «Ինչո՞ւ չեն յաջողիր մեր գործեր», «Սխալ մտածումներ» (Վանի Պօղոս Եպիսկոպոսի քարոզք որ խօսած է Վանի Արարք քաղի Էկեղեցոսն մէջ 1885 մարտ 31ին), «Իգական սեռի մասնակցութիւնը հայրենասիրական գործին», «Հայ ժողովրդի և թիւրք զօրքերի կռիւը Վանի մէջ» (Նամակ Վանէն) և այլն և այլն :

«Արմէնիա»ի Յուշարարը իր Յառաջարանով մէկտեղ կը բաղկանայ 124 բրեսներէ, ութածալ գիրքի վրայ տպագրուած : Գինն է 1 Ֆր. և 40 սնթմ. (1 Ֆրանք :

Ժ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

# Վ Ր Է Ժ

Թարգմանեց ռուսերէնից

Ա. Ս.

Ինչ որ այսօր Թիւրքերն կանեն Հայաստանի մէջ և անել կուտան Գիւրգերին, նոյնը և աւելին կանէին նաև Պուլկարիաի մէջ մինչև որ Պուլկարներն ազատուեցան այդ բարբարոսների լուծէն և ունեցան իրենց ազգային կառավարութիւն : Թրքական բռնաբարութիւնների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ Վրէժը որ ցոյց կուտայ նաև թէ Պուլկարներն այն աստիճան նեղուած էին քաղաքների և գիւղերի մէջ որ յանձն կառնէին մինչև իսկ լեռներն քաշուելով ապրիլ և յարմար առիթն ներկայացած ժամանակ իրենց վրէժ լուծել Թիւրքերէն :

Վրէժի գինն է 20 սնթմ. (15 սնթմ.) :

ժԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

# ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ

(Յու. նակաւն պատմութիւնից)

ԳՐԵՅ

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

Ասկէ գրէթէ 5 դար յառաջ երբ  
Թիւրքերն տիրապետած էին յունա-  
կան Սիրա կղզուն, իրենց սովորութեան  
համեմատ ամեն չարիք կը հասցունէին  
Յոյներին, ծանր տուրքերով կը նեղա-  
ցունէին, անոնց ստացուածներ կը կո-  
ղոպտէին, կիներն ու աղջիկներն կը  
բռնաբարէին և այլն: Թոմաս Բոցարիս  
անուն մի նաւավար և ձկնորս, մի աղ-  
քատիկ պատանի որ սակայն հարուստ  
էր աղնիւ զգացումներով, կղզուն մահ-  
մէտական կառավարչէն իւր քրոջ ա-  
ռեւանգուելուն համար գրգռուած,  
ողբելորուած, կը յաջողի ինք եւս գրգ-  
ռել Սիրայի արդէն դժգոհ յոյն ժողո-

վորդը որոնք կը յարձակին կառավար-  
չի պալատին վրայ, կը լինչեն թիւրք  
չարագործները և օգուտ քաղելով  
թիւրք կառավարութեան այն ժամա-  
նակի խառնաշփոթ դրութենէն, ա-  
պստամբութիւն կը հրատարակեն, մի  
քանի կռիւներ կունենան իրենց վրայ  
ղրկուած թիւրք զօրքերին հետ որոնց  
կը յաջողին յաղթել Թոմաս Բոցարիսի  
առաջնորդութեամբ և Բոցարիս ժողո-  
վրդի հաճութեամբ կը հրատարակուի  
կառավարիչ Սիրայի:

Գին (15 սանթիմ) 20 սանթիմ:

ժԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

# ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԳՐԱԾ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրե-

նասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իւրեւ նմոյշներ զանազան քաղաքների մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւրերբեմն գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ : Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ , ցիր և ցան կը գտնուին Կ. Պօլիս արպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է , և Ասիա և Արմենիա յրազիրներին մէջ : Նմոյշների մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներինչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են : Գին (10 սանթիմ) 15 սանթիմ :

# ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

## ԳՐԵՅ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ : Գին 1 Ֆրանգ , (75 սանթիմ) :

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովն :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
« ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ »

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն

Ս Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  
Զ Ա Տ ՈՒ Թ Ե Ա Ն

Բ. Տ պ ա գ ր ու թ ի ն ց

« Հայոց Հայրենասիրական Միութեան » հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր Հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու :

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ : Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը զրկուի 5 ֆրանքով : Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ) :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

ԱՇԽԱՐՀՈՂԳՐԱԿԱՆ , ՏԵՂՈՂԳՐԱԿԱՆ ,  
ՊՈՏՄԱԿԱՆ ԵՒ ՀՆԱԽՕՍՍԱԿԱՆ  
Գ Ի Ր Գ Ե Ր

ԱՌՈՎԵՍՆՅ Գ. — Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան (Գէորգ Արուսեանց որ Տփղիսի ներսիսեան վարժարանին մէջ Հայոց Պատմութեան ուսուցիչ էր և անյայտացու յանկարծ, ձեռագիր թողած էր այս «Համառօտութիւն Հայոց ազգի Պատմութեան»ը որ իր մահէ յետոյ հրատարակուեցաւ և մինչեւ այժմ Յրդ տպագրութեան է արժանացած) : 2 ֆրանգ :

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — Պատկերագարդ Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի (Բաղմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծագիր և երկիջեան 105 երեսներէ բաղկացած է և դիւրահասկանալի պարզ գրաբար

լեզուով գրուած, զարգարուած է  
 ՅՅի չափ պատկերներով որոց մէջ կը  
 գտնուին Վան քաղաքի, Վանի բեր-  
 դի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի  
 զանազան նշանաւոր աւերակների ևն.  
 պատկերներն: Գրքին վերջը կը գը-  
 նուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ  
 Հայքի, բոլոր քաղաքների, բերդե-  
 րի, գիւղերի, լեռների, գետերի մի  
 ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին  
 առջեւ նշանակուած է թէ գրքին  
 քանիերորդ տանը մէջ գրուած է ա-  
 նոր վրայ): Գին 5 ֆր. և 50 սնթմ.:

Ա.Լ.ԻՇԱՆ Հ. Ղ. — Յուշիկք Հայրենեաց  
 Հայոց (Հայրենասիրութեան վրայ ջերմ  
 եռանդով գրուած մի նախարանէ յե-  
 տոյ, Հայաստանի բնախօսութեան վե-  
 րաբերեալ հմտալից և ընդարձակ տե-  
 ղեկութիւններ կան գրուած: Այնու-  
 հետև, Հայոց Պատմութենէն առնուած  
 մի քանի անձերի և հետաքրքրական  
 նիւթերի վրայ առանձին առանձին գըր-

ւածներ կան մանրամաս և ընդարձակ  
 տեղեկութիւններով որոնք բազմա-  
 թիւ տպագրուած և գեռ անտիպ պատ-  
 մական գիրքերէ քաղած և ամփոփած  
 է Հ. Ալիշան այս գրքի մէջ, իրեն յա-  
 տուկ գրաւիչ և բանաստեղծական ո-  
 ճով պատմելով զանոնք: Գրուած է աշ-  
 խարհարար լեզուով. կը բաղկանայ 2  
 հատորէ և ունի 6 պատկեր): 11 ֆր.:

Հ. Ղ. Ա.Լ.ԻՇԱՆ.—Նշմարք եւ Նշխարք  
 Հայաստանի Ա, Բ և Գ պրակներ (Հա-  
 յաստանի հետաքրքրական տեղերէն  
 և քաղաքներէն Յ6 ին լուսանկար  
 պատկերները զետեղուած են Նշմարքի  
 3 պրակներին մէջ, անոնցմէ իւրա-  
 քանչիւրին վրայ պատմական և աշ-  
 խարհագրական հմտալից տեղեկու-  
 թիւններով, աշխարհարար լեզուով  
 գրուած վեր. Հ. Ղ. Ալիշանէն): 3  
 պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

ՆՈՅՆ Անգլիերէն լեզուով Ա մասը  
 միայն: 9 ֆրանգ:

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց. (Հայաստանի Շիրակ գաւառի այս առանձին տեղագրութեան մէջ արտագրուած կան Շիրակի և գլխաւորապէս Անիի բազմութիւ արձանագրութիւններ, տեղագրիծներ, պատկերներ մնացորդ շէնքերի որոնք իրենց կիսակործան վիճակի մէջ կը ներկայացունեն տակաւին Հայոց ճարտարապետութեան հրաշակերտներն և այլն: Սկիզբը կայ Շիրակ գաւառի մասնաւոր քարտէզը, 1880ին գծուած: Այդ գաւառի և հեռեւապէս Բագրատունեաց իշխանութեան վերաբերեալ պատմական մանրամաս տեղեկութիւններ կան արձանագիրներէ և պատմական այլ աղբիւրներէ քաղուած:)


16 Քրանգ:

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւան Մեծագործ (Հ. Արիշանի այս հրաշակերտ ոչ միայն մեծ պատիւ կը բերէ

բաղմահմուտ հեղինակի հայրենագրութեան և հայրենասիրական զգացմանն, այլ և մեծ պարծանք է ամբողջ Հայութեան համար որի փառաւոր յիշատակներն աւերակների մէջէն և դարաւոր փոշիների տակէն դուրս բերել յաջողած է: Կիլիկիան, մեր վերջին թագաւորութեան օրանն ու գերեզմանը, ներկայացուած է այս գրքի մէջ իւր ամեն մանրամասնութիւններով: Ընթերցողը կը գտնէ այնտեղ պատմական, աշխարհագրական, տեղագրական, բնախօսական և այլն և այլն հին ու նոր տեղեկութիւններ, հայ թագաւորների հրովարտակներ, իշխանավարական, գատավարական և այլն հետաքրքրաշարժ ծանօթութիւններ որոնք Ալիշանի իւր բաղմահմուտ միանձնու մասնաշրջան և խուզարկութիւնների արդիւնքն են: Հայ գրականութեան մէջ երեւցած այդ հրաշակագործ հայրենանուէր վար-

29-41082 (2919)

1930



գապետին Հ. Ղեւոնդ Ալիշանի ճարտար և անխոնջ ձեռքովը կանգնած է ցոյց տալու համար մեր կիլիկեան թագաւորութեան փառքն ու պարծանքը, արժան է որ զարգարէ ամեն մէկ Հայի գրադարանը դի ամեն Հայ իրաւունք ունի պարծենալու անով : Գրքին սկիզբը կայ Հ. Ղ. Ալիշանի պատկերը : Ամբողջ գործը՝ բացի մի ընդարձակ ներածութենէ, կը պարունակէ 592 երկիջեան երեսներ : Տպագրուած է ընտիր թղթի վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատկերներ որոնք կը ներկայացունեն կիլիկիահի գեղեցկագոյն տեսարանները : Ունի նաեւ կիլիկիահի աշխարհագրական նրբագիծ մէկ քարտէզը :

Սիսուանի առաջնակարգ տեսակի (չաւագոյն թղթի վրայ) տպագրուած և 15ի չափ գունաւոր պատկերներով և պարզեւագիտներով) գինն է 55 ֆր.

Նոյն Բ կարգի (առանց գունաւոր պատկերների)

40 ֆրանք :

Նոյնին Համառօտութիւնը ( Աշխարհաբար լեզուով քաղուածներ կը ներկայացունէ Սիսուանէն որ գրուած է գրաբար լեզուով — թէեւ ոչ խրթին և դժուարիմաց ոճով — և կուտայ ծանօթութիւններ «Սիսուան») պարունակութիւններին վրայ այնպէս որ զայն չունեցողին ցանկութիւնը կը գրգռէ ունենալու համար և ունեցողին ալ մի լաւ առաջնորդ կը լինի այդ ընդարձակ աշխատութեան մէջ դիտող աչքով շրջելու և հետազօտելու համար) :

3 ֆրանք և 50 սանթիմ :

Ա.ԼԻՇԱՆ Հ. Ղ. — Այրարատ . Բնաշխարհ Հայաստանեայց (Սիսուանէն յետոյ, 1890ին, նոյն ոճով և ընթացքով հրատարակուած է և Այրարատը որ ունի 590 երկիջեան երեսներ, զարդարուած է 236ի չափ մեծ և փոքր պատկերներով — տեղագիր, կենդանօգիւր և այլն — որոց մէջ շատ կան գունաւորներ, կը պարունակէ Այրարատ աշ-

խարհին մէջ գտնուած բեւեռագիրնե-  
րի և արձանագիրներին ընդօրինակու-  
թիւններ, բաղմաթիւ մասնաւոր քար-  
տէզներ և այլն. առանձինն տպագ-  
րուած ունի իր հետ ամբողջ Այրարատ  
աշխարհի քարտէզն գունաւոր բաժա-  
նումներով: Այրարատ աշխարհին պատ-  
կանող 2500ի չափ քաղաքների, գիւ-  
ղերի և մինչեւ իսկ մանր շէների ա-  
նուններ կը գտնուին այս գրքի մէջ ու-  
րոյց վրայ շատ կամ քիչ ընդարձակօ-  
րէն գրուած է և կամ յիշատակութեամբ  
անցած: Ընթերցողը կը գտնէ «Այրա-  
րատ»ի մէջ մեր հայրենիքի այդ մասին  
վերաբերեալ պատմական և աշխար-  
հագրական մանրակրկիտ և հետաքրք-  
րաշարժ տեղեկութիւններ: Աւելորդ է  
ասել թէ «Այրարատ»ը տպագրուած է  
շատ գեղեցիկ կերպով և ամենալաւ  
թղթի վրայ: Նիւթական կարողու-  
թեան տէր հայրենասէր և ուսումնա-  
սէր հայերի գրագարանին համար ահա

աւելցած է մի նոր և փառաւոր զարդ-  
այ որ անյագարար կարդալու և ու-  
սումնասիրելու շատ նիւթեր կը պա-  
րունակէ: ) Գին 100 ֆրանք

ԱԼԻՇՍԵ Ն. Ղ. — Սիսական (Հ. Ղ. Ա.  
լիւան՝ Հայաստանի 20 աշխարհների ըն-  
դարձակ տեղագրութեանն ձեռնար-  
կած լինելով, Սիսուանէն և Այրարատէն  
յետոյ մամուլին յանձնուած է «Սիսա-  
կան»ն, Սիւնեաց աշխարհի այդ ըն-  
դարձակ տեղագրութիւն որ լատ ժա-  
մանակներ լոյս կը տեսնէ, իւր նախըն-  
թաց երկու հսկայագործ աշխատու-  
թիւնների նման ճոխ պարունակու-  
թեամբ և շքեղազարդ տպագրու-  
թեամբ) : 75 ֆրանք

ԱԼԻՇՍԵ Ն. Ղ. — Հայկական աշ-  
խարհագրութեան (1881ին վեներտիկ  
գումարուած Աշխարհագրական Հա-  
մադգային Ժողովին մէջ Հայաստանի  
աշխարհագրութեան նկատմամբ Հ.  
Ղ. Ալիշանի կարդացած ընդարձակ և

հմտալից ճառին թարգմանութիւնն է հայերէն աշխարհարար լեզուով) : 65 սանթիմ :

ԱՅՎԱԶԵԱՆ ԳՍԲՐԻԷԼ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ.

— Նիկոյ եպիսկոպոս կամ պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի իկաթոլիկութիւն (Հայաստանի մահմետական հարստահարիչների ձեռքէն ազատելու համար հարիւր հազարներով զէպիքրիստոնեայ եւրոպան փախած Հայերին նախ իրենց լեզու և ապա իրենց ազգային եկեղեցի կորսնցունելով, Նիկոյ անուն անարժան մի հայ եպիսկոպոսի և եւրոպացի ճիզվիթ եկեղեցականների ճնշման տակ Հայ ազգի այդ մեծ գաղթականութեան բռնի կաթոլիկ դարձած լինելուն և ի վերջոյ իրենց հայ ազգութիւն եւս կորսուած լինելուն խիստ սրտաշարժ մէկ պատմութիւնն է) :

1 Քրանք :

ԳՍՐԵԳԻՆ (Հ. Գար Զ.) — Հայերէն ճիւղ դպրութեան պատմութիւն (Հայերէն մա-

տենագրութեան պատմութիւնն է Դ գարէն մինչեւ ժԳ դար : Այդ ժամանակամիջոցի բոլոր ծանօթ մատենագիրների կենսագրութիւններն, իրենց գրածներն անուններն և երբեմն մինչեւ իսկ այդ գիրքերի մէջ պատմուածների ամփոփումը, անոնց ձեռագիրներն ե՞րբ և ո՞ր տեղեր հրատարակուած լինելը, անոնց լեզուի և ոճի վրայ նկատողութիւններ և օտարազգի բանասէրներին այդ գիրքերի վրայ արած քննադատութիւնները կը ներկայացունէ : Սկիզբը կայ գրուած մի համառօտ տեսութիւն հայերէն տառերի գիւտի պատմութեան և անկէ առաջ գործածուած տառերին և բեւեռագրութիւններին վրայ, Կիլիկեցիների ժամանակին և աւելի հնագոյն գրչագիրների գրութեան կերպին, մագաղաթին, թանաքին, նկարներին և այլնի վրայ, հայերէն լեզուի ծագման և կրած փոփոխութիւններին վրայ, ինչպէս նաեւ

Գողթան երգիչների մասին : Որովհետեւ մեր ազգային պատմութիւնն նախնիքների թողած այդ յիշատակներէ քաղւած է, այդ գիրքերի և գրողների վրայ ծանօթութիւններ ստանալը մեծապէս կը նպաստէ ազգային պատմութեան ուսումնասիրութեանը : Բ տպագրութիւն 1886ին, յաւելումներով և վիճակներով թիւններով . կը բաղկանայ 10 կէտ մանր տառերով շարուած և ութածալ 795 երեսներէ, բացի յառաջարանէն որ 32 երես է : Գին 6 ֆրանք

ԳՍՐԵԳԻՆ (Հ. Գ. Զ.) — Հայերէն նոր դպրութեան պատմութիւն (Ա) գիրք որ վերագրեալի առաջին տպագրութեան Բ մասն է 1878ին տպուած, կը ներկայացունէ Հայ գրականութեան պատմութիւնը ժ.Գ դարէն մինչև վերջին ժամանակները : Սկիզբը կայ մի ընդհանուր տեսութիւն մեր նոր մատենագրութեան վրայ, հայերէն գրաբար և աշխարհաբար լեզուներին վրայ, ինչ-

պէս նաեւ հայալատին մատենագիրներին (Ունիթուներ) մեր լեզուի մէջ մտցունել աշխատած աղճատումներին վրայ և այլն) : 4 ֆրանք և 50 սանթիմ

ԳՍՐԵԳԻՆ (Հ. Գ. Զ.) — Մատենադարան հայկական քարգմանութեանց նախնեաց (Արժ. Հ. Գարեգին Զարբհանէլեան որ Հայ գրականութեան պատմութիւնը իրեն մասնագիտութեան նիւթընտրած է, հայերէն հին դպրութեան պատմութիւնը հրատարակելէ յետոյ, 1889ին հրատարակած է նաեւ Հայկական հին քարգմանութեանց այս մատենադարան որի մէջ մասնաւոր հետազոտութեան առարկայ դարձունելով մեր նախնիքների թարգմանութիւններն, տեղեկութիւններ կուտայ Գ դարէն սկսած մինչև ժ.Գ դարի վերջերն ասորերէնէ, յունարէնէ և լատիներէնէ թարգմանուած հայերէն գիրքերին, թարգմանիչներին, այդ թարգմանութիւնների մասին եւրոպացի գիտնա-

կանները գրածներին վրայ և այլն. մասնաւորապէս կը խօսի Ե դարի թարգմանիչներին վրայ և մանրամաս կը պատմէ Ս. Գրքին նախ ասորերէնէ հայերէնի թարգմանուիլը և յետոյ մեծամեծ ջանքերով ձեռք բերուած յունական ճշգրիտ և վաւերական օրինակներին հետ բաղդատուելով՝ ամենայն հաւատարմութեամբ և ճշուութեամբ կրկին անգամ հայերէնի թարգմանուիլը, Ս. Գրքի զանազան մասերին որո՞ց ձեռքով և ո՞ր ժամանակներ թարգմանուած լինելը և այլն: Նախնեաց թարգմանութիւնների մասին հետազօտութիւններ անել ուզող բանասէրներին համար՝ շատ հետաքրքրութեան արժանի է այս գիրք որ մանր տառերով և ութածալ 783 երեսներէ կը բաղկանայ, բացի յառաջաբանէն որ 31 երես է:)-6 ֆր.

ԳԱՐԵԳԻՆ (Հ.Գ. Զ.)—Հայկական մատենագիտութիւն (1565 թուականին առաջին անգամ Եւզոկիացի Արգարի

ձեռքով մեր ազգի մէջ տպագրութեան գործը սկսուելէն մինչեւ 1883 թուականը հրատարակուած հայերէն գիրքերի մէկ ցուցակն է, այսուբենի կարգով շարուած, ուր գիրքերի անուններին հետ դրուած են նաեւ անոնց հեղինակների և տպագրիչների անուններն, տպագրութեան թուականովը մէկտեղ: Շատ տեղեր ալ այդ գիրքերի յառաջաբաններէն կամ յիշատակարաններէն և կամ պարունակութիւններէն փոքր ի շատէ հատուածներ արտատպուած են, անոնց վրայ տեղեկութիւն տալու համար: Սկիզբը կայ Արժ. հեղինակին մէկ տեսութիւնը՝ որ 32 երեսներէ բաղկացած է, տպագրութեան գիւտին Եւզոկիացի Արգարեանի ձեռքով մեր ազգի մէջ մտնելուն և ունեցած յառաջդիմութեանը վրայ):

Գին 6 ֆրանք  
ԸՆՏԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՔ պատկերազարդ (Մեր ազգային պատմութեան մէջ ան-

ւանի եղողներէ 13 անձի լուսանկար պատկերները կը պարունակէ այցաքարտի մեծութեամբ (format carte de visite), անոնց ամեն մէկին վրայ ալ 5էն 11 երեսի չափ պատմական տեղեկութիւններով: Այդ 13 անձեր են Հայկ, Տիգրան Բ, Արտաշէս Բ, Սաթինիկ, Աշխէն Տիկին Հայոց, Խօսրովիդուխտ, Մեծն Վարդան Մամիկոնեան, Ներսէճ Կամսարական, Գայլ Վահան Մամիկոնեան, Լեւոն Ա Ռուբինեան թագաւոր Հայոց, Մովսէս Խորենացի, Անանիա Շիրակացի և Ներսէս Լամբրոնացի):

7 Ֆրանք:

ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ.— Համառօտ Պատմութիւն Հայոց (Հայկէն սկսելով կը բերէ կը հասցունէ Հայոց պատմութիւնն մինչեւ ժժ դարի սկիզբներն, հայ Մելիքների ունեցած իշխանութեան ջընջուիլը. նաև ամփոփ տեղեկութիւններ կուտայ աշխարհի զանազան կողմերն ցրուած հայ գաղթականութիւններին

երբեմն և այժմ ունեցած վիճակներին վրայ: Իր համառօտութեան մէջ բաւական տեղեկութիւններ կը պարունակէ ազգային պատմութեան վերաբերող անցքերին վրայ որոց ամեն մէկի պատմուած ատեն՝ հայրենասիրական խրատներ և խորհրդածութիւններ ալ աւելցած են պատմութեան պարագայներին համեմատ: Ամբողջ գիրքը որ կը բաղկանայ մանր տառերով 380 երեսներէ, բաժնուած է 2 մասի. Ա մասը—106 երես— Հայոց պատմութեան աւելի համառօտ ամփոփումն է Հայկէն մինչեւ Սիւնեաց Դաւիթ բէկը, նախակրթարանների ուսանողներին համար գրուած հարց պատասխանով. Բ մասը — 274 երես — նոյնին աւելի ընդարձակուածն է: Վեներտկի Մխիթարեանց տպարանէն հրատարակուած այս «Հայոց պատմութիւն» վեցերորդ տպագրութիւն ունեցած է մինչեւ այժմ, ապացոյց իւր գտած մեծ ընդունելութեան): Դին 2 Ֆր. և 30 սնթմ.

ԻնձիճեԱՆ չ.Ղ.— Հնախօսութիւն Հա-  
յաստանեայց աշխարհի . 3 թեժ հատոր-  
ներ որոց ամեն մէկ հատորը մօտաւո-  
րօպէս 400էն մինչեւ 500 երես քառա-  
թալ դիրքով . իւրաքանչիւր հատորի  
սկիզբը կայ մէկ մէկ գեղեցիկ փորա-  
գրուած պատկեր : ( Հայաստանեայց  
հնախօսութիւն մը գրելը շատ դժար  
գործ եղած է քանի որ մեր նախնիքների  
կենցաղն ու սովորութիւնները յակա-  
պէս նկարագրող աղբիւրներ կը պակ-  
սին : Մխիթարեան բաղմովաստակ  
միաբաններէն չ. Ինձիճեան երկա-  
րատեւ և մանրակրկիտ աշխատու-  
թեամբ պատմական շատ գիրքեր ու-  
սումնասիրելով , Հայաստանեայց աշ-  
խարհագրական և պատմական այս հը-  
նախօսութիւն խմբագրած է ընդար-  
ձակ կերպով որչափ այդ կարելի եղած  
է իրեն համար : Իր այդ եռահատոր  
հնախօսութեան նիւթերն են Հայաս-  
տանի աշխարհագրութիւնը — Հայաս-

տանի դիրքը , տարածութիւնը , օդը ,  
լեռները , գետերը իրենց ակերով , ըն-  
թացքներով , գետակներով , կամուրջ-  
ներով , նաւարկելի տեղերով և այլն ,  
լճակներն և ջերմուկներն , Հայաստանի  
բոյսերն , հանքերն և կենդանիներն ,  
վաճառականական ճանապարհներն և  
շահաստաններն և այլն—, գործածուող  
գրամքերի անուններն , Հայաստանի  
բնակիչների շատնալուն և յետոյ պակ-  
սելուն պատճառները , օտար ազգերի  
յարձակումներն Հայաստանի վրայ ,  
Հայաստանի կառավարութեան կեր-  
պերը , Հայաստանի միեւնոյն ժամա-  
նակ մի քանի թագաւորութիւնների  
բաժնուիլը , պալատական պաշտօնեայ-  
ները , նախարարութիւններն իրենց  
պաշտօններով , օտար ազգերի հետ  
դաշնակցութիւնները , զինուորական  
կարգերն , զօրաբանակի բաժանում-  
ներն և անոնց պիտոյքները , Հայերի  
մէջ գործածուող պատուանունները և

պաշտօնական անունները , թագաւոր-  
ներին և իշխաններին սովորական ըզ-  
գեստները , հարսանիքի և մեռելա-  
թաղի սովորութիւնները , թագաւոր-  
ների յաջորդութեան օրէնքները , Հա-  
յաստանցիների ձիրքերն ու թերու-  
թիւնները , ուսումն ու արհեստները  
Հայաստանի մէջ , հեթանոսական և  
քրիստոնէական կրօնները Հայաստանի  
մէջ , վանքերն , եկեղեցական դասա-  
կարգութիւններն , կաթողիկոսական  
ընտրութիւններն և կաթողիկոսների  
իրաւունքներն , եպիսկոպոստրաններն  
և այլն այլն : Այս համառօտ դանկ բա-  
ւական է ցոյց տալու թէ ինչպիսի հե-  
տաքրքրական նիւթերի վրայ խօսուած  
է այս եռահատոր «Հնախօսութեան»  
մէջ որի լեզուն թէեւ գրտար է , բայց  
պարզ և դիւրահասկանալի ոճով :

Գին 3 հատորին միասին 43 ֆր.

ՊԱՂԱՍԱՆԵԱՆ Ս. — Պատմութիւն Հա-  
յոց ( Ամեն Հայի համար անհրաժեշտ

պարտք է իմանալ իւր ազգի պատմու-  
թիւնը , գիտնալ թէ ինչպէս կազմուեր  
է իւր ազգութիւն և ո՞ւր եղեր է իւր  
հայրենիք , որո՞նք եղած են իւր եր-  
ջանկութեան կամ իւր թշուառութեան  
պատճառներ և այլն : Անոնք որ ժամա-  
նակ չունին Չամչեանի եռահատոր և  
գրարառ «Հայոց պատմութիւն»ն ու-  
սումնասիրելու , բայց միեւնոյն ժամա-  
նակ չեն ալ գոհանար Հայոց պատմու-  
թեան համառօտ դասագիրք մը միայն  
կարգալով , կրնան ընտրել էջմիածնի  
ձեմարանին ուսուցիչ հանգուցեալ ՐՍ-  
տեփաննոս Պալասանեանի գրած այս  
նորատիպ «Հայոց պատմութիւն» որ  
մեր ազգի ծագումէն սկսելով կը գա-  
յը հաննի մինչեւ 1885 թուականը և  
կը վերջանայ Մոսկար կաթողիկոսի ընտ-  
րութեամբը : Հեղինակը այս պատմու-  
թիւն գրած ատեն աչքի առջեւ ունե-  
ցած է նաեւ վերջին ժամանակի դիւ-  
նականներին մեր ազգային պատմու-

Թեան վրայ արած քննութիւնները որոյմէ ջանացած է օգուտ քաղել որչափ այդ կարելի է աղգային պատմութեան դասագրքի մը մէջ որ յատկացած է նաեւ դպրոցական ուսանողներին) :

5 ֆր. և 25 սանթիմ :

ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ—Տեղագրութիւնք ի Փոքր Է. ի Մեծ Հայս (Մխիթարեան վարդապետներէն Հ. Սարգիսեան 10 տարի հետաքրքրութեամբ պտըտելով Մեծ և Փոքր Հայաստանի մէջ, երկիրը անձամբ ուսումնասիրած և իր աշխարհագրական և պատմական հետազօտութիւնների արդիւնքն եղած է այս հոյակապ և տաժանելի աշխատութիւն մեր հայրենի երկրին վերաբերեալ) :  
 Հ. Ներսէսի տեղագրութիւնը կը բաղկանայ քառածալ 290 երեսներէ, կը պարունակէ Մեծ և Փոքր Հայաստանի վեց աշխարհների տեղագրութեան քարտէշներ (Վան, Շիրակ և Զարիշատ, Կարին, Բաբերդ, Սեբաստիա և Թորթում),

15 պատկերներ քաղաքների և շէնքերի, 21 յատկագրիծներ զանազան շէնքերի, 317 ընդօրինակութիւններ արձանագրութիւնների — որոց 262ը հայերէն, 29ը վրացերէն, 25ը յունարէն և 1ը տաճկերէն — և 8 ընդօրինակութիւններ ընդարձակ կամ փոքր բեւեռագրութիւնների : Այս գրքէ այժմ սակաւաթիւ օրինակներ միայն կան մընացած) : 26 ֆրանք :

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅ. — Այց Թիւրքաց Հայաստանին (Մոսկուաի համալսարանի նախկին ուսանողներէն Պ. Լեւոն Սարգսեանց 1888ի ամառին մի ճանապարհորդութիւն արած է Կարսի գծով Էրզրում և անկէ մինչեւ Տրապիզոն, Թիւրքաց Հայաստանի վիճակին վրայ տեղեկութիւններ ստանալու համար : Իւր այդ տեղեկութիւններ և ճանապարհորդական արկածներ հրատարակուած են Թիֆլիզի Մուրճ ամսագրին մէջ և յետոյ արտատպուելով մի առանձին գիրք եղած է) : 2 ֆ. 10 ս. :

ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓՍՆԷ. — Մովսէս Խորենացու Հայկական պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնը (Սերթ. Խորէն վարդապետի այս աշխատութիւն որ Պետերբուրգ տպագրուած է 1889ին, Իզմիրեանցի կտակած Սահակեան-Մետրոպեան մրցանակին արժանացած է : Ունի մի ընդարձակ հրատարից յառաջարան և բազմաթիւ ծանօթութիւններ Խորենացու գրած Հայոց պատմութեան վերաբերեալ որոնք բնագրէն աւելի տեղ բռնած են : Այս գրքէն սահաւածիւ օրինակներ միայն կան մնացած այժմ : ) 6 Ֆրանք :

Վ.Ս.ԿՆԵՐ. — Ճանապարհորդութիւն ի Հայաստան (Գերմանացի գիտնական ճանապարհորդ Մ. Վակներին դէպի Հայաստան արած ուղեւորութեան նկարագրութիւնն է որի մէջէն մեզ համար հետաքրքրական և ամենէն կարեւոր մասերն քաղելով հայերէնի թարգմանած է Հ. Փիլիպպոս ծամճեան : Նկա-

րագրական ոճը սահուն և հաճելի է և Հայաստանի կլիմային, հանքերին, բոյսերին, կենդանիներին վրայ այդ գիտնականի տուած տեղեկութիւնները հետաքրքրութեան արժանի են : Աւելցունենք նաեւ որ Վակների ուղեկից թարգմանն եղած է հայրենասէր Խաչատուր Աբովեանցը, Վերք Հայաստանի անուանի հեղինակը, որի մասին կը խօսի Վակներ իր գրքի մէջ և որ անշուշտ պատճառ եղած է այդ օտարալեզու գիտնականին Հայերի մասին սուտ և սխալ տեղեկութիւններով չպաշարուելուն և իր գրուածներէ մէջ մեր ազգին մասնաւոր համակրութիւնն ցոյց տալուն : ) Դին 2 Ֆր. և 30 սանթիմ :

ՔԱԶՌԻՆԻ Հ. Մ. — Աշխարհագրութիւն Հին եւ Նոր Հայաստանեայց — (Աշխարհաբար լեզուով գրուած և 298 երեսներէ բաղկացած այս աշխարհագրութիւն՝ համառօտ և ամփոփ կերպով տեղեկութիւններ կուտայ Նոր

Հայաստանի և առաւելագէս Հին  
Հայաստանի վրայ որ շատ հարկաւոր  
է Հայոց անցեալ պատմութեան ծա-  
նօթանալ ուղղորդեն) : 2 ֆր. 50 սնթ.

ՔԱՂՈՒՆԻ Հ. Մ.— Հնախօսութիւն Հա-  
յաստանի (12 ծլ. 300 երեսներէ բաղկա-  
ցած է այս հնախօսութիւն որի մէջ հա-  
մառօտիւ տեղեկութիւններ տրուած  
են Հայաստանի քաղաքական հին կա-  
ռավարութեան ձեւերին , նախարա-  
րական և զինուորական բաժանումնե-  
րին , պատերազմական գործիքներին ,  
նախարարական և ժողովրդական ըզ-  
գեստներին , ազգային սովորութիւն-  
ներին , օրէնքներին , դրամներին վրայ  
և այլն , քաղելով Հ. Ինճիճեանի ըն-  
դարձակ եռահատոր «Հնախօսութիւն  
Հայաստանեայց»էն : ) 3 ֆրանք :

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՔԱՐՏԷՂՆԵՐ

Հայերէն տառերով

ՀԱՅԱՍՏԱՆԻ աշխարհացոյց քար-  
տէզը ըստ նախնի աշխարհագրաց ,  
փորագրուած Վենետիկ , 92 հարիւ-  
րորդամէթր լայն և 70 հարիւրորդա-  
մէթր երկայն հաստ թղթի վրայ : 4 ֆր.

ՍԻՍՈՒԱՆԻ (Հին և Նոր Կիլիկիա) աշ-  
խարհացոյց քարտէզը , փորագրուած  
Վենետիկ 1885ին , 77 հարիւրորդա-  
մէթր լայն և 51 հարիւրորդամէթր եր-  
կայն թղթի վրայ : 2 ֆր.

Լատիներէն տառերով

Հետեւեալ քարտէզները՝ որոց մէջ  
կը գտնուի Հայաստան աշխարհն իր  
զանազան մասերով , Գերմանացի երե-  
ւելի աշխարհագէտ Քիրքերտի հսկողու-  
թեան տակ պատրաստուած են : Քա-  
ղաքների , գիւղերի և այլն անունները  
հայերէն և թուրքերէն գրուած են ,

Թէեւ յատինական տառերով : Բոլորին մէջ ալ սահմանները նշանակուած են գունաւոր բաժանումներով :

ՀԱՅԱՍՏԱՆԻ մինչեւ այժմ հրատարակուած ԱՄԵՆԱԸՆԴՍԱՐՁԱԿ ՔԱՐՏԷՁԸ (Nouvelle carte générale des Provinces Asiatiques de l'Empire Ottoman, par H. Kiepert) 6 կտոր քարտէշներէ կազմուած որոց իւրաքանչիւրը գրեթէ 50 հարիւրորդամեթր երկայնութիւն և նոյնչափ լայնութիւն ունի . համեմատաչափն է 1:1,500,000 : Ունի նաեւ մէկ առանձին քարտէզ որ ցոյց կուտայ Տաճկահայաստանի նահանգներին վարչական բաժանումները 1883-84ի Սալնամէին համեմատ : Այս առանձին առանձին մասերով քարտէշները՝ որոնք ամենքը միասին ամբողջութիւն մը կը կազմեն, դիւրութիւն կուտան կտոր կտոր ձեռք առնելով գիտել ուզողներին : 7 կտորին միասին գինն է 14 Փր. : ՆՈՅՆ 6 կտորներն ամբողջովին կը-

տաւի վրայ փակցուած այնպէս որ թէ՛ ամեն կտորներն իրար վրայ ծալուելով առանձին դիտելու դիւրութիւն կը լինի և թէ՛ ամենքը միատեղ իբրև մէկ աշխարհացոյց քարտէզ պատի վրայ կը կախուի ուր 1 մեթր և 64 հարիւրորդամեթր լայնութեամբ և 1 մեթր բարձրութեամբ մի տեղ կը բռնէ : Իրեն յատուկ մի թանձրաքարտէ ծածկոցի մէջ գրուած, նահանգային բաժանումների քարտէզովն մէկտեղ 20 Փր. :

ԹԻԻՐԲԻԱ ԻՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՍԻԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՎ, առանց Արաբիաի (Carte générale des Provinces Européens et Asiatiques de l'Empire Ottoman). 4 կտոր քարտէշներ : 1:3,000,000 համեմատաչափ : Գ տպագրւ. 1886 : 4 տախտակներն միասին 11 Փրանք :

ՆՈՅՆ 4 տախտակներն միատեղ կը տաւի վրայ փակցուած, թէ՛ իրար վրայ ծալելով առանձին մասերը գիտելու դիւրութեան համար և թէ՛ պատի վը-

րայ կախելու համար ուր 1 մէթր և 27 հարիւրորդամէթր լայնութեամբ և 92 հարիւրորդամէթր բարձրութեամբ տեղ կը բռնէ : Իրեն յատուկ մի թանձրաքարտէ ծածկոցի մէջ դրուած :

13 ֆրանք և 50 սանթիմ :

ԿՈՎԿԱՍ, ԱՐՄԷՆԻԱ, ՔԻՒՐՏԻՍՏԱՆ ԵՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ. Համեմատաչափ 1 : 1 միլիոն 500,000 : 4 կտոր քարտէղներ : 4ը միասին 8 ֆրանք և 50 սանթիմ :

ՆՈՅՆ 4 կտորներն միևնոյն համեմատաչափով ամբողջովին մէկ թղթի վրայ որ ունի 82 հարիւրորդամէթր լայնութիւն և 82 հարիւրորդամէթր բարձրութիւն : 8 ֆրանք և 50 սանթիմ :

ԵՓՐԱՏ ԵՒ ՏԻԳՐԻՍ ԳԵՏԵՐԸ Ի ՀԱՅԱՍՏԱՆ, ՔԻՒՐՏԻՍՏԱՆ ԵՒ ՄԻՋԱԳԵՏԻ (5 կտոր որոցմէ մին կը ներկայացունէ միւս 4 կտոր քարտէղներին վրայ գըտնուած լեռների բարձրութեան չափերը . իսկ 4 քարտէղներին մէջ կան Թիւրքահայաստան, Ասորիք, Պարսկահա-

յաստան, Ռուսահայաստան և Պարսկաստանի մէկ մասն : Համեմատաչափ 1:1,500,000 : 5 կտորն միասին

8 ֆրանք և 50 սանթիմ :

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍՆԱՅԱՍՏԱՆ ՌԻԹԷՐԻ գծած : Համեմատաչափ 1:1,500,000 :

3 ֆրանք :

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ Խանիկովի գծած : Համեմատաչափ 1:800,000 : Գին 6 ֆրանք :

ԹՐԲԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՔԱՐՏԷՁ : Համեմատաչափ 1:500,000 (Երկու կտոր քարտէղներ որոնք կը ներկայացունեն Թիւրքահայաստանի հիւսիսային մասը միայն, Տրապիզոնէն սկսելով Կարին նահանգը, Շիրակ ևն.)

2 կտորը միասին 4 ֆր. և 25 սնթիմ :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 4 կտոր քարտէղներ : Ա և Բ տախտակներն կը ներկայացունեն Հիւսիսային-Ասորեստան, Միջագետք և Հարաւային-Հայաստան. Համեմատաչափ 1:600,000 : Գ տախտակն՝ Քիւրտիստան և Իրաք. Համեմատաչափ 1:800,000 :

Դ տախտակն՝ Պարսկաստանի կեդրոնա-  
կան եւ հարաւային մասերն (Իրաք, Ճար-  
սիստան եւ Լուրիստան : )

4 կտորը միասին 14 Ֆրանք:

ՓՈՔՐ ԱՍԻԱԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԱՍԻՆ  
մասնաւոր քարտէզը 15 կտոր : Համե-  
մատաչափ 1,250,000 : Տպագր. 1890ին :  
Գին 15 տախտակին միասին 50 Ֆր. :

ԱՍԻԱԿԱՆ ԹԻԻՐԻՔԻԱ : Համեմատա-  
չափ 1,4,000,000 : (Ահաւասիկ Քիբեր-  
դի գծած մի փոքրիկ եւ աժանագին  
քարտէզ որ կը ներկայացունէ Հայաս-  
տանի, Կովկասի, Ատրպատականի,  
Քիւրտիստանի, Ասորեստանի, Եգիպ-  
տոսի, Կիպրոսի, Անատոլուի եւ Ռու-  
մէլիի ամենէն կարեւոր տեղերը : Այս  
քարտէզի հրատարակութեամբ գիւ-  
րութիւն տրուած է ամենէն թեթեւ քը-  
սակ ունեցողին ալ՝ Ասիական Թիւր-  
քիաի եւ հետեւապէս Հայաստանի գէթ  
մի փոքրիկ քարտէզն ունենալ գեղեցիկ  
գծագրութեամբ եւ գունաւոր բաժա-  
նումներով : ) 1 Ֆրանք եւ 60 սանթիմ :

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ԼէՕ.—Վահան Մամիկոնեան (Վարդան  
Մամիկոնեանի եղբորորդուն Վահանի  
գործերն մեր Հայոց պատմութեան ա-  
մենափառաւոր էջերէ մին կը կազմեն :  
Ռուսիացի հայ գրագէտներէն Պր. Լէօ  
վիպական հետաքրքրաշարժ ոճով պատ-  
կերացուցած է այս գրուածի մէջ թէ  
ինչպէս Վահանի հետ միաբանոյ Հա-  
յերն, թէեւ փոքրաթիւ, ուրիշների  
վրայ յոյսեր տածելէ յուսահատ, իրենց  
յոյս գրին Աստուծոյ վրայ եւ քաջ ու  
խոհեմ Վահան Մամիկոնեանի առաջ-  
նորդութեամբն կռիւներ անելով, վեր-  
ջապէս յաջողեցան իրենց պահանջած  
իրաւունքներ ստանալ Բ. Դոնէն : )

0,90 սանթիմ :

ԾԵՐԵՆՅ.—Երկուեր թ դարու (Աղ-  
գային անուանի վիպասան Ծերենցի  
գրած այս գիրք ցոյց կուտայ թէ  
մահմէտականներն թ դարին մէջ Հա-  
յաստան արշաւելով ինչ բարբսպոսու-

Թիւններ կը գործէին այնտեղ, ինչպէս և կը գործեն այժմ նոյն իսկ ԺԹ գարին մէջ: ԵՐԿՈՒՆՔը իբրև օրինակ ցոյց կուտայ ազգային գործիչներին Սասունցի Յովնան անուն մէկը որ ի զուր բարձր տեղերէ ազգային փրկութեան ահնկալելէ յետոյ, վերջապէս ժողովրդին մէջ կը փնտռէ ազատութեան ոյժը և անով կը յաջողի մի քանի յաղթութիւններ տանիլ թշնամիներին դէմ:)

3 Քր. և 50 սնթմ.

ԾԵՐԵՆՑ.— Թեոդորոս Ռշտունցի (Ծերենց իւր գրած այս վէպի մէջ ներկայացուցած է մեր ազգային պատմութեան այն մասերէ մին որ միշտ կարգալու պէտք ունինք խրատ առնելու և միեւնոյն սխալները դարձեալ չկրկնելու համար: Է դարին մէջ երբ մէկ կողմէ մահմէտական Արաբացիներն և միւս կողմէ քրիստոնեայ Յոյն կայսրներն իրենց արշաւանքի ասպարէզ դարձունելով Հայաստանը կը կռուէին

իրար դէմ և ոտնակոխ ու աւերակ կը դարձունէին մեր հայրենիք, գտնուեցաւ մի մարդ, Թէոդորոս Ռշտունցի զօրավարը, որ շատ աշխատեցաւ նախարարներին համողել թէ փոխանակ իրենց յոյս դնելու օտարազգի քրիստոնեայ կայսրներին վրայ, իր հետ միարանելով մի ներքին ոյժ կազմեն և իրենց ազգային իշխանութիւն մը հաստատեն Հայաստանը կառավարելու և պաշտպանելու համար. բայց նախարարների եսականութիւնը արգելք եղաւ փորձառու Թէոդորոսի տուած խորհուրդներին, Հայերի մասնաւոր շարժումներն ալ՝ առանց ներքին ոյժ գոյացունելու տկար մնալով, փոխարինուեցան սոսկալի շարդերով և Հայաստանի վիճակը հետզհետէ աւելի վատթարացաւ: ) Գին 3 Քր. և 50 սնթմ.:

ԾԵՐԵՆՑ.— Թորոս Աեռցի: Բ տպագրութիւն (Կիլիկիաի նորահաստատ հայ իշխանութիւնը ջնջուած էր 1136ին,

Լեւոն Ա. Իշխանին իր երկու որդիներէ  
հետ մէկտեղ գերի բռնուելով և Կ.  
Պօլիս տարուելովն : Լեւոնի որդիներէն  
մին , Թորոս , քաջ և խելացի , 9 տարի  
յետոյ , յաջողեցաւ փախչիլ և 10,000ի  
չափ Հայեր հաւաքելով Կիլիկիաի մէջ  
իր դրօշի տակ , յարձակեցաւ Յոյներին  
վրայ , յաղթեց անոնց և վերականգնեց  
Հայերի անկախ իշխանութիւնը Կիլի-  
կիաի մէջ : Մերենց՝ որ ուխտաւորի մը  
սրտով պտըտած է երբեմն Կիլիկիան ,  
Ռուբինեանց իշխանութեան մնացորդ  
յիշատակներէն ներշնչուելով , իւր այս  
վէպի նիւթ արած է Կիլիկիաի հայ իշ-  
խանութիւնը վերականգնող այս պան-  
ծալի գործիչը , Լեւոնի որդին Թորոս  
Բ Ը :

3 Փրանք և 50 սանթիմ :

ՐԱՅՅԻ. Դաւիթ բէկ. Բ տպագր. Ա,  
Բ և Գ գիրքերն վերջաբանով մէկտեղ  
որ Ա տպագրութեան մէջ չկար , մէկ  
հատորի մէջ կապուած ( Թէեւ մեզնէ  
չատ դարեր յառաջ աշխարհ եկած մեր

քաջ նախնիքների , Վարդանի, Լեւոնի  
և այլնի գործերը փոքր ի շատէ ծանօ-  
թացած են մեր ազգի մէջ , բայց դեռ  
անցած դարու մէջ , մեզնէ 170 տարիի  
չափ միայն յառաջ , Դաւիթ բէկի ձեռ-  
քով Հայաստանի մէջ ազգային իշխա-  
նութեան վերականգնուելուն — որ 7  
տարիի չափ տեւելէ յետոյ , իւր յաջոր-  
դի օրով , մեր հայրենիքի այդ փոքրիկ  
մխիթարութիւն եւս զոհ եղաւ փոփո-  
խամիտ և դաւաճան Հայերի մատնու-  
թեանը—մանրամասնութիւնները դեռ  
չատ ծանօթացած չէին մեր մէջ : Մեզ-  
նէ հաղիւ 3-4 սերունդ միայն յառաջ  
եղող Հայերը ժամանակակից են եղած  
Դաւիթ բէկին . բայց հայ ժողովրդի  
ներկայ սերունդը մինչև այժմ շատ հա-  
րեւանցի տեղեկութիւններ միայն ու-  
նէր այդ Սիւնեցի հայ իշխանի պատմու-  
թեան և իր զարմանալի քաջութիւնների  
վրայ որ ցոյց տուած է Հայաստանի ազ-  
գային իշխանութիւնը վերականգնե-

լու համար Օսմանցիներին և Պարսիկ-  
 ներին դէմարած կռիւներին մէջ: Բաֆ-  
 ֆին որ մեր ազգային նոր կեանքէ  
 վէպեր գրելու առաջնորդ հան-  
 դիսացաւ և իր հետաքրքրաշարժ և  
 յանկուցիչ գրուածներով մեծ ոգեւո-  
 րութիւն յառաջ բերաւ, Դաւիթ բէկի  
 մասին եղած ձեռագիր կամ տպագիր  
 տեղեկութիւններն կրցածին չափ փըն-  
 տրուելով աչքէ անցունելէ զատ՝ ինք  
 անձամբ գնացած շրջած է Սիւնեաց  
 աշխարհը Դաւիթ բէկի գործած տե-  
 դերն և այն կողմեր դեռ ժողովրդին  
 մէջ պատմուող աւանդութիւններն և  
 Մելիքների սերունդներէն մի քանի  
 անձերի և ծերունիների տուած տեղե-  
 կութիւններն ալ առնելէ յետոյ գրած  
 է Դաւիթ բէկի այս պատմական վէպ  
 որի մէջ շատ տեղեր հանգամանքներէն  
 օգուտ քաղած է ընթերցողին հայրե-  
 նասիրական եռանդոտ գաղափարներ  
 ներշնչելու և խելացի միտքեր հաղոր-  
 գելու համար: ) Գին 10 ֆրանք:

ԲԱՅՅԻ.—ԽԵՆՔԸ. Արկածներ վերջին  
 ռուս-թուրքական պատերազմից: —  
 Ջալալեղլի. Մի պատկեր նրա արշա-  
 ւանքից: Բ տպագրութիւն: (Մեր ազ-  
 գի նոր կեանքէն առնելով նոր պէտ-  
 քերի համեմատ Բաֆֆիի գրած առա-  
 ջին վէպերն են ասոնք որոնք վերջին  
 ռուս-թուրքական պատերազմի ժա-  
 մանակ Հայերի կրած սոսկալի թշուա-  
 ռութիւններէն մի քանի պատկերներ  
 կը ներկայացունեն և միանգամայն ցոյց  
 կուտան մի քանի գիծեր՝ հայ ժողո-  
 վրդի ազատութեանը նուիրուելիք  
 գործիչների կեանքէն: Այս ոգեւորիչ  
 երկու վէպեր՝ որոնք առաջին անգամ  
 զատ զատ տպագրուած էին և վաղուց  
 արդէն սպառուած լինելով շատ կը  
 վնասուէին, այժմ երկրորդ տպագ-  
 րութեամբ հրատարակուելով, երկու-  
 քը մէկտեղ մէկ գրքի մէջ կապուած կը  
 ծախուին: ) Գին 8 ֆրանք և 75 սնթմ:

ՐԱՖՖԻ. — Կայծեր. (Ազգային ժամա- նակակից պէտքերին նկատմամբ Րաֆ- ֆիի գրած և ամենամեծ հետաքրք- րութեամբ կարդացուած գիրքերէ մին է «Կայծեր»ը որի մէջ կը ներկայա- ցունէ ծրագիրներ և խորհրդածելու նիւթեր հայ գործիչներին համար) : Ահատորը այժմ բոլորովին սպառուած լինելով, ծախու կը գտնուի միայն Բ հատորը որ կը սկսի Րաֆֆիի ներկայա- ցուցած գործիչների խմբին վան մտած ժամանակէն :

Գին Բ հատորին 8 ֆր և 50 սնթմ. :

ՐԱՖՖԻ. — Կայծերի վերջը. (Վերոգր- եալ «Կայծեր» վիպասանութեան մէջ ներկայացող գործիչներին՝ ազգային վերածնութեան համար իրենց արած աշխատանքներէն յետոյ, ի՛նչ գրու- թեան հասած լինելը կը ներկայացու- նէ : Հեղինակի ձեռագիրներէն առ- նուած և հրատարակուած է նորա մա- հէն յետոյ) : Գին 1 ֆր. և 75 սնթմ. :

ՐԱՖՖԻ. — Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկութիւնը 1752 թուականում. Անդրկովկասեան պատմական վէպ (Րաֆֆին հարկ հա- մարած է ռուսերէնէն հայերէնի թարգ- մանելով հրատարակել այս գիրք որի սկիզբը իր գրած յառաջաբանէն կը քա- ղենք հետեւեալ մի քանի տողերն, գէթ մի փոքրիկ ծանօթութիւն տուած լինելու համար այդ գրքի պարունա- կութեան վրայ) . «Թարգմանելով Ռու- սաց լեզուից Պլատոն Զուբովի «Ղարա- բաղի Աստղագէտը» անունով վէպը, մեր նպատակն է եղել ծանօթացնել հայ հասարակութիւնը այդ գեղեցիկ աշխատութեան հետ, որի նիւթը առ- նըրված լինելով Ղարաբաղի մելիքների կեանքից, հարկաւ մեզ, հայերիս հա- մար, պէտք է շատ հետաքրքիր լինի : . . . ներկայացնելով «Ղարաբաղի աստ- ղագէտը» մեր ընթերցող հասարակու- թեանը, մեր ցանկութիւնն է ոչ միայն

ծանօթացնել նրան մի գեղեցիկ վիպա-  
կան ստեղծագործութեան հետ, որի  
մէջ արեւելեան կեանքը նկատված է  
իր պարզ, նահապետական գոյներով,  
— այլ առաւել թանկագին է այդ գիր-  
քը մեզ համար այն կողմից որ իբրեւ  
մի պատմական արձանագրութիւն, բա-  
ւական ճիշդ կերպով պատկերացնում  
է մեզ այն աղետալի հանգամանքները,  
որոնք Ղարաբաղի հայկական իշխա-  
նութիւնների քայքայման և անկման  
պատճառը դարձան: Եւ ինքը, յար-  
գելի հեղինակը, այդ նպատակով է  
գրել իր վէպը, և դրա համար էլ կո-  
չում է նրան «Անդրկովկասեան պատ-  
մական վէպ»: Իր վէպի մէջ Զուբով,  
չօչափում է այն զգալի վէրքերը, ո-  
րոնք մեր աղգի պատմական կեանքում  
չատ անգամ եղել են հայկական իշխա-  
նութիւնների անկման և մահացու-  
թեան պատճառները: Այդ վէրքերն  
են անմիաբանութիւնը և ներքին երկ-

պառակութիւնը: Տոյց տալ դրանց վը-  
նասակար հետեւանքները, — կացու-  
ցանում է «Ղարաբաղի Աստղագէտ»ի  
գլխաւոր նպատակը: . . .

«Իբրեւ նիւթ իր հետաքրքիր վի-  
պասանութեան, հեղինակը վեր է  
առել 1750 թուականներում Ղա-  
րաբաղի մէջ կատարված անցքերը:  
Այդ ժամանակ Ղարաբաղի նահան-  
գում կային հինգ հայկական իշխա-  
նութիւններ, որոնք զետեղված էին  
հինգ առանձին գաւառներում և բո-  
լորը միասին կոչվում էին Խամսայի մե-  
լիքութիւններ» \*): 4 Ֆր. և 20 սնթմ:

\* Բաժնի մի առանձին գիրք ալ ու-  
նի գրած Խամսայի մելիքութիւններ ա-  
նունով որի մէջ մանրամաս կր խօսի այդ  
հայկական հինգ Մելիքութիւնների վրայ  
որոնք վերջին ժամանակներ իրենց ան-  
միաբանութեամբ տկարացած, սպաստան  
գտնելու համար զիմեցին քրիստոնեայ  
հզօր կայսրութեան, Ռուսիայի գիրկը ուր  
չափազանց ուժով գրկուելով և սեզմուե-  
լով իրենց վերջին շունչ տուին: Բաժնի  
գրած «Խամսայի Մելիքութիւններ»ը բո-  
լորովին սպառուած է այժմ:

ԲԱՅՅԻ . — Սամուէլ ( Բաֆֆիի հը-  
րատարակած ազգային վէպերի վեր-  
ջինն է այդ որի նիւթը առնուած է  
Դ Գարի Հայերի կեանքէն և որ , բա-  
ցի իւր ներշնչած ազատասիրական  
զգացումներէ , հետաքրքրաշարժ տե-  
ղեկութիւններ կուտայ այն ժամանակի  
Հայերի բարքերին , սովորութիւննե-  
րին և այլնի վրայ : ) 10 Ֆր.

Ե Ր Գ Ե Ր

Ե Ի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԻՇԱՆ . — Նուազք 5 հատոր 12 ծլ .  
Բ տպագր . ( Մեր ազգի առաջնակարգ  
բանաստեղծ Հ. Ղեւոնդ Ալիշանի , ծեր  
Նահապետի , գրած ոտանաւոր բանաս-  
տեղծութիւնների մէկ հաւաքածոյն կը  
ներկայացունեն այս 5 հատորներ : Ա  
հատորն , Մանկունի , հեղինակն նուր-  
րած է աշակերտներին և մանուկներին

որոց բերանով կաղօթէ առ Աստուած  
և որոց անունով կողեւորուի և կերգէ :  
Բ հատորն , Մաղբունի , Խոհունի և Բը-  
նունի , կը ներկայացունէ ճարտարա-  
հիւս ոտանաւորներով բարեմաղթու-  
թիւններ , խորհրդածութիւններ և բը-  
նական իրերի , տեղերի և անձերի ուղ-  
ղուած տաղեր : Գ հատորն , Հայրունի ,  
հայրենիքի , մեր Հայաստան աշխարհի  
յիշատակներին վերաբերող սրտայոյզ ,  
հոգի ներշնչող և օրինակելի ճարտա-  
րահիւս ոտանաւորներունի որոնք մեր  
մէջ գրողներէ շատերն իրենց ետեւէն  
ձգած են աշակերտելու համար , մա-  
նաւանդ նահապետի անունով գրուած  
երգերն որոնք աշխարհաբար լեզուով  
գրուած են մինչդեռ մնացած երգերն  
թէ՛ այս Գ հատորի և թէ՛ միւս 4  
հատորներին մէջ գրաբար լեզուով են  
գրուած : Դ հատորն , Տէրունի , Աստու-  
ծոյ ուղղուած խօսքեր և կրօնական  
նիւթերի վրայ ոտանաւորներ կը պա-

րունակէ . իսկ Ե հատորն , Տխրուցի , հառաչանքներ և տխուր յիշատակներ կը ներկայացունէ : ) Հինգ հատորն մէկտեղ  
11 ֆրանք :

ՆՈՅՆ գրքի Գ հատորն , Հայրուցի , առանձին , 2 ֆր. և 80 սանթիմ :

ԳԱՄԱՌՒ ՔԱԹՈՒՊԱ . — Բանաստեղծութիւններ ( Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաշունչ և հրահանգիչ բանաստեղծութիւններն կը պարունակէ . սկիզբն դրուած է հեղինակին պատկերը ) :

2 ֆրանք :

ԳԱՄԱՌՒ ՔԱԹՈՒՊԱ . — Ազատ Էրզնր (Գամառ-Քաթիզի «Բանաստեղծութիւն»)ներէն Ազատ Երզնրի մասը առանձին տետրակով տպագրուած ) :

20 սանթիմ :

ԵՐԶՆԿԵԱՆՅ . — Զայնագրեալ ազգային երգարան (Տփղիսի Ներսիսեան ազգային վարժարանի հայկական ձայնագրութեան ուսուցիչ Տ. Եղնիկ քահանայ

Երդնկեանց 104 հատ հաւաքելով ազգային հայրենասիրական երգերէն՝ որոց տպագրուիլն արգելուած է այժմ Թիւրքիոսի մէջ , դրած է այս երգարանի մէջ իրենց եղանակներով մէկտեղ ուրոնք հայկական ձայնանիշներով (note) գրուած են : ) Գին 2 ֆր. և 80 սնթիմ :

ՄԻԱՆՍՍՐԵԱՆՅ Մ. Մ. — Քնար Հայկական (Մինչեւ 1868 թուական հրատարակուած ազգային , հայրենասիրական , ուսանողական , սիրային , օւրախութեան , երգիծական և այլ երգերի , կրօնական տաղերի և շարականների մի ճոխ հաւաքածոյ է , 590 երեսներէ բաղկացած : Շատ տեղեր երգերի հեղինակների համառօտ կենսագրութիւնն ալ դրուած է : Սկիզբը կայ 57 երեսէ բաղկացած մի ընդարձակ տեսութիւն մեր նախնի ժամանակների երգերին և մասնաւորապէս Գողթան երգերին վերաբերեալ , քաղելով Ս. Պալասանեանի , Հ. Գարեգին Զարբ-

հանէլեանի , Մկրտիչ Էմինի և Հ. Յովսէփ Գաթրըճեանի գրածներէն : Սկիզբը կայ նաեւ Միանսարեանցի գրած մի ընդարձակ յառաջաբանը : Գրքին վերջը աւելցուած է հայերէն բազմաթիւ առածների մի հաւաքածոյ — 17 երես — , ազգային լուսաւորութեան մասին խորհրդածութիւններ — 44 երես — և այլն : Այս ընդարձակ երգարանի խմբագիր-հրատարակողը , գընդապետ Միքայէլ Միանսարեանց , վաղուց արդէն մեռած լինելով , իւր այս գիրք սկսած է սակաւագիւտ դառնալ :

8 Փրանք և 75 սանթիմ :

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԳՐՈՒԱԾՆԵՐ

Ինձիձեւն . — Ազգասէր (Վենետիկի Մխիթարեան Պատ. Միաբանութենէն հրատարակուած այս գիրք որ 226 երեսներէ բաղկացած է , կը բացատրէ

թէ ինչո՞ւ համար և ի՞նչպէս պէտք է որ յարգ սիրէ իւր ազգ և հայրենիք և յոյց կուտայ թէ ի՞նչ բարոյական պահասութիւններ կը տիրեն մեր ազգի մէջ . թէ՛ օտար ազգերի և թէ՛ մեր ազգի պատմութենէն ազգասէր անձերի օրինակներ մէջ բերելով , անոնց կենսագրութիւնները կը ներկայացունէ ընթերցողին : Լեզուն Կ. Պօլսի հին աշխարհաբարի ոճն ունի և տեղ տեղ միքանի բառերի թուրքերէնն եւս նշանակուած է փակագծի մէջ , անուաներին ալ դիւրահասկնալի լինելու համար ) :

2 Փրանք և 70 սանթիմ :

ԽՐԻՄԵԱՆ . — Վանգոյժ ( 1876 թուի դեկտեմբերի 1ին թիւրք զօրքերը կըրակ ձգեցին և վառեցին Վանի շուկայի գիշեր ժամանակ : Նախապէս պատրաստուած մի դաւադրութիւն էր , քաղաքին Հայերը յետին աստիճան խեղճութեան մատնելու նպատակով : Հրդեհի ժամանակ զօրքերն և սպա-

սաւորները այն թիւը ք երեւելիների որոնք խորհրդակից եղած էին այս գործի, անմիջապէս խուժեցին կողոպտեցին Հայերի խանութները և մինչեւ որ սօքա Այգեստանէն — ուր կը բնակի Հայերի մեծամասնութիւնը — իմացան և քաղաք վազեցին, գրեթէ ամեն ինչ լմնցած էր: Տակաւին ցայսօր բազմութիւ է այդ հրդեհի զոհ եղած հարուստ Հայերի թիւը որոնք անկանգնելի կերպով կործանուեցան: Այդ ժամանակ խորիմեան Սրբազան Հայրիկը «Վանգոյժ» անունով մի տետրակ հրատարակեց որով մխիթարական խօսքեր և հայրական խրատներ կուղղէր Վանցի Հայերին և կը բացատրէր թիւրքերին ալ թէ սխալ է իրենց բռնած քաղաքականութիւն և թէ Հայերին փաստելով փաստած կը լինին բուն իսկ իրենց շահերի: Թիւրք կառավարութիւնն արգիլեց «Վանգոյժ»ի վաճառումը. բայց Պրն. Ամերիկեանց Թիֆլիսի մէջ հրատարակեց նորա այս Բ տպագրութիւն):

70 սանթիմ:

ԲԱՌԳԻՐՔՆԵՐ

ԱԻԳԵՐԵԱՆ. — Առձեռն Բառարան Հայկազնեան լեզուի. Բ տպագրութիւն (Հայերէն լեզուի խորը թափանցել աշխատող բանասէրներին համար շատ օգտակար մի գործիք կը լինի Մխիթար Արքաճօր աշխատասիրած երկհատոր, մեծադիր, բայց միեւնոյն ժամանակ մեծագին, Հայկազնեան Բառարանը որ սակայն իր դիրքով և գնով (100 ֆր.) տանելի և մատչելի չէ ամենին համար. այսու ամենայնիւ ոչ միայն գրաբար, այլ և կանոնաւոր աշխարհաբար լեզուով գրուած գիրքեր կարդացողին համար ալ հայերէն բառքրքի մը պէտքը զգալի կը լինի: Ահա այդ պէտքը կը լրացունէ Աւգերեանի Հայերէն առձեռն Բառարանը որ առձեռն փոքր գիրքի մէջ բաւական մեծ քանակութեամբ հայերէն բառեր կը պարունակէ, թէ՛ գրաբար և թէ՛ աշխարհաբար լեզուներին

մէջ գործածուած : Շատ տեղեր հա-  
յերէն բառերին առջեւ թուրքերէն  
թարգմանութիւնն ալ գրուած է հա-  
յերէն տառերով : Այս Բ տպագրութեան  
մէջ առաջինէն 5000ի չափ բառ աւելի  
է գրուած : Առձեռն բառարանը կը  
բաղկանայ 12 ծալքով և երկիջեան 850  
երեսներէ , 8 կէտ շատ մանր տառե-  
րով շարուած) : 10 ֆր. և 50 սնթմ :

ԳԱՆԹԱՐԵԱՆ Ս. — Բառարան հայե-  
րէն-գաղղիերէն-տաճկերէն : (Այս բա-  
ռարան որ հրատարակուած է 1886ին  
Վենետիկի Մխիթարեանց տպարանէն,  
աշխատասիրած է Հ. Սամուէլ Գան-  
թարեան , իր աչքի առջեւ ունենալով  
ոչ միայն իրեն առաջնորդող Պօթանի  
բառգիրքը Ֆրանսերէն բաժնին հա-  
մար , այլ և մինչեւ այժմ մեր մէջ հը-  
րատարակուած ֆրանսերէնէ հայերէն  
բառգիրքներն Աւգերեանի , Էմինեա-  
նի և Նորայր Բիւզանդացու , որոցմէ  
ամենէն վերջը երեւան ելած լինելով ,

բնականապէս կրցած է օգուտ քաղել  
իր նախորդներէ , որոնցմէ այս տար-  
բերութիւն եւս ունի որ ֆրանսերէն  
բառերի հայերէն նշանակութիւնները  
աշխարհաբար լեզուով է գրած : Ֆրան-  
սերէն բառերին քով գրուած են նաեւ  
անոնց հնչումներ հայերէն տառերով ,  
արեւմտեան Հայերի արտասանութեան  
համեմատ : Նոյնպէս հայերէն տառե-  
րով գրուած են ֆրանսերէն բառերի  
թիւրքերէն նշանակութիւնները : Կը  
բաղկանայ ութածալ գիրքով և երկիջ-  
եան 1572 երեսներէ , հայերէն բառերն 8  
կէտ մանր տառերով և թիւրքերէններն  
նօտր գիրերով շարուած) : 9 ֆ. և 50 ս. :

ՆԱՐՊԷՅ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ. — Բառգիրք  
հայ-գաղղիարէն : (Հայերէնէ ֆրանսե-  
րէն այս ընտիր բառգիրք որ տպագ-  
րուած է Փարիզ , արժանացած է Բ տը-  
պագրութեան : Կը բաղկանայ ութա-  
ծալ և երկիջեան 1032 երեսներէ , ա-  
րամեան գեղեցիկ տառերով և շքեղ

կերպով տպագրուած : Հայկաբանութեան շատ դարձուածներ և աշխարհաբար լեզուի ոճեր կը գտնուին անոր մէջ ճշդութեամբ ֆրանսականին թարգմանուած : Փարիզի Արեւելեան կենդանի լեզուների վարժարանին ուսուցիչ հայագէտ անուանի Տիւլօրիէն այս ընտիր բառգրքի հրատարակութեան համար ուրախութիւն յայտնած է յատկապէս մի նամակով որ գրուած է բառգրքին սկիզբը : ) Այս բառգրքի շքեղ կերպով կազմուածի գինն է 21 ֆր. : Թղթակազմ չգտնուիր :

ՊԵՏՐՈՍԵԱՆ Մ. — Բառարան անգղիարէնէ հայերէն, Բ տպագրութիւն, աւելցուած և ուղղուած Հ. Պետրոսեանէ և յօրինուած Հ. Յ. Աւգերեանէ : (Այս բառգիրք յօրինուած է անգլիացի ուսուցիչ Ճօն Պրէնտի աշխատակցութեամբ և գրաբար լեզուով. ութածալ և երկիջեան 816 երեսներ ունի մանր տառերով շարուած : Ամեն մէկ

անգլիերէն բառի առջեւ անոր հնչուածը գրուած է հայերէն գիրերով : Սկիզբը գրուած են նաեւ մի քանի համառօտ տեղեկութիւններ անգլիերէն լեզուի քերականութեան վերաբերեալ : )

22 ֆրանք :

ՊԵՏՐՈՍԵԱՆ Մ. — Նոր Բառգիրք հայերէնէ անգլիերէն, Բ տպագրութիւն : (Վերագրեալին երկրորդ մասն է : Ասոր ալ սկիզբը հայերէն գրաբար լեզուի քերականութեան վերաբերեալ ծանօթութիւններ կան գրուած անգլիերէն լեզուով : )

22 ֆրանք :

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք

Գ Ա Ղ Ղ Ի Ե Ր Է Ն — Հ Ա Յ Ե Ր Է Ն

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԳԵՂԵՅԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

Պատկերագարդ տպագրութիւն

Ընտիր թղթի վրայ, մերձաւորապէս 1300 ձեւերով, մեծագիր քստածալ, մօտ 300 թերթերէ բաղկացնալ: Ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն-Իտալիերէն Բառագրոց:

ԳՂՈՒԻ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷՆ ԱՐԳՊ.Ի ՔԱՋՈՒՆԻՈՅ

Լոյս տեսած է Առաջին Հատորն. 150 թերթ, 627 գեղեցիկ ձեւերով:

Բացուած է բաժանորդագրութիւն երկու Հատորին ի միասին:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագնոյ երկու Հատորին ի միասին:

Բ. Բաժանորդագինն է 50 Ֆր.:

Գ. Բաժանորդագրութիւնն կը շարունակուի մինչեւ ցվերջ 1891 տարւոյս:

Դ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՄՆ ԱՒԱՐՏԵԼԷ ՅԵՏՈՑ՝ ԳԻՆԸ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ:

Ե. Բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիր դրամոց ստացման մասին ի Վարչութենէ Տպագրատան Մխիթարեան Պատ. Մխարանութեան Վենետկոյ:

Զ. Բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ ի միասին. իսկ երկրորդ Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի:

Այս կարեւոր գործին բաժնորդագրուի ցանկացողները կարող են գիմել նաեւ Մարտէյլ Արմենիաի խմբագիրտնօրէն Մ. Փորթուգալեանին որ այդ ԱՐՈՒԵՍՍԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔԻ բաժնորդագրութեան գործակալ կարգուած է:

(Արուեստական և գիտական բառերին համապատասխան հայերէն բառեր գըտնելու կամ ի հարկին շինելու համար, նոյնպէս և կենդանական, բուսական և այլն Քրանսերէն բառերի հայերէն ձիջ համապատասխանող բառերն գտնելու համար երկար տարիներէ ի վեր Հ. Մա-

նուէլ Քաջունու , այդ գիտնական վարդապետի , կատարած աշխատութիւնների արդիւնքն է այս բառգիրք որ զարդարուած է նաեւ բազմաթիւ պատկերներով կենդանիների , բոյսերի , մեքենայների և այլն : Մանրամաս տեղեկութիւններ տրուած են իւրաքանչիւր բառի նշանակութեան վրայ , ինչպէս տեսնել eau, ջուր բառը՝ որի վրայ բացատրութիւններ գրուած են 287 տող մանր տառերով թէ ջուրը ի՛նչպիսի մի մարմին է , ի՛նչ տեսակները կան և թէ քրանսերէն այս ինչ կամ այն ինչ բառի հետ միանալով ի՛նչ նշանակութիւն կունենայ . arbre, ծառ բառի վրայ 90 տող գրուած է իր զանազան առումներով . étoile, աստղ բառի վրայ 140 տող, զծագրուած ձևերով մէկտեղ և այլն : Շատ բառերի թիւրքերէն կամ յունարէն համանշանակներն ալ գրուած են : Տարակոյս չունինք որ եթէ գործին մօտէն ծանօթանան , գրական անձերէ շատեր պիտի փութան բաժնորդագրուիլ այս ամենակարեւոր և մեծ աշխատութեան որ քառածալ , երկիջեան և մանր տառերով 2 խոշոր հատորներէ կը բաղկանայ : Պատրաստ ենք ցանկացողին իբրեւ նմոյշ զրկել այդ Բառգիրքէն կէս թերթ :

**ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ԳԻՐՔԵՐ**

ԱՅՎԱԶԵԱՆ Գ. ԵՊ. — Եգիպտոսի հրեանքիւնները . (Եգիպտոսի , իր հին սովորութիւնների և շէնքերի վրայ հետաքրքրական տեղեկութիւններ տրւող մի տետրակ է որ ունի նաեւ 3 պատկեր : ) 35 սանթիմ :

ԱՅՎԱԶԵԱՆ Գ. ԵՊ. — Կ. Պօլսոյ առումն յՍամանեանց . (1433ին Փաթիհ Սուլթան Մէհմէտին Կ. Պօլսի վրայ յարձակելով այդ քաղաք առնելուն հետաքրքրաշարժ պատմութիւնն է : Ունի մի փոքր պատկեր Կ. Պօլսի քաղաքին և մի մեծ պատկեր որ կը ներկայացունէ Վոսփորի մէջ Չրաղանի պալատը և թագաւորի նաւակին անկէ անցնիլը ) 35 սթմ :

ԱՌԱՔԵԼԵԱՆՅ Հ. — Պատմութիւն Խաջակրութեան եւ բազաւորութեանց Երուսաղիմայ ( 11րդ և 12րդ դարերին մէջ Եւրոպայի ունեցած վիճակը և Խաջակրութեան պատմութիւնը կը ներկա-

յացունէ : Թարգմանիչը , Պր. Հ. Առաքելեանց , աւելցուցած է նաեւ ծանօթութիւններ Ռուբինեանց տէրութեան վերաբերեալ որոնք յարաբերութիւններ ունեցան Խաչակիրներին հետ :

1 Քր. 50 սանթիմ :

ԳՍՖԹԱՆ Հ. Պ. — Կենդանաբանութիւն (Կենդանաբանութեան այս դասագրքի մէջ համառօտ ոճով տեղեկութիւններ տրուած են մարդու կազմուածքին , չորքոտանիների , թռչունների , ձուկների վրայ և այլն : Ունի 413 պատկեր : Թէեւ դպրոցների համար գրուած , բայց հասակաւոր շատ մարդեր ալ կրնան օգուտ քաղել անկէ :

2 Քրանք և 20 սանթիմ :

Զայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի (Պատարագի երգեցողութիւնները միօրինակ եղանակի վերածելու համար հայկական ձայնանիշներով մէկտեղ գրուած և տպուած է էջմիածին) Բ տպագրութիւն : 10 Քրանք :

ՊՐԻԻԸՐ. — Բանալիք բնական երեսօրից (Բնական գիտութիւններին վերաբերեալ դասական գրուած մը ամենկարգի ընթերցողներին հասկնալի և խորթելի չլինիր . բայց այսպիսի գրուածներ որոյ մէջ հարց-պատասխանով և դիւրահասկնալի ոճով բացատրուած են բնական շատ երեւոյթների պատճառներն և օրէնքներն , բնական գիտութիւնները մինչեւ մէկ աստիճան ժողովրդականացնելու կը ծառայեն : Անգլիացի Պրիւրրի այս նպատակով շինած գրքին հայերէն աշխարհաբար լեզուի թարգմանութիւնն է այս որի մէջ կան 2013 օգտակար և հետաքրքրաշարժ հարցումներ և պատասխաններ հոգին , տաքութեան , լոյսին , օդին , օգերեւոյթներին , ձայնի , տարրաբանութեան և զանազան թոյների և դեղերի վերաբերեալ ) : 4 Քր. :

ՍՏԵՓԱՆԵԱՆ Հ. Դ. — Տարբեր աշխարհագրութեան (Ուսումնական , բնական և

քաղաքական աշխարհագրութեան մի  
 դասագիրք է : Աշակերտը կամ ընթեր-  
 ցողը աշխարհի ամեն կողմերն գտնուած  
 տէրութիւններին և երկիրներին վրայ,  
 ինչպէս նաեւ երկրագնդին վրայ, գէթ  
 համառօտ տեղեկութիւններ ստանալէ  
 զատ, գրեթէ ամեն գլխաւոր քաղաք-  
 ների, զանազան շէնքերի և այլն պատ-  
 կերներն կը գտնէ ասոր մէջ : Ունի 185  
 պատկերներ, չնայելով որ գինն ալ շատ  
 աժան է : ) Բ տպագր. : 1 Ֆր. և 25 ս. :

ԲԱՅՅԻ.—Փոսնջ, Հատոր Բ (Բաֆֆիի  
 հրատարակած առաջին գիրքն է «Փոսն-  
 ջ»ը որի Ա հատորը բոլորովին սպա-  
 ռած լինելով, մնացած է այժմ Բ հա-  
 տորը միայն : Այս հատոր մի այնպիսի  
 կապակցութիւն չունի Ա ին հետ որ չը  
 կրնայ բաժնուիլ անկէ. կը պարունակէ  
 վէպեր և ոտանաւոր բանաստեղծու-  
 թիւններ Պարսկահայերի և Ռուսահա-  
 յերի կեանքէն առնուած : ) 5Ֆ., 25 ս. :

ԲԱՅՅԻ.— Խաչագողի յիշատակարանը  
 (Կընկարագրէ Խաչագողների արկածնե-  
 րը և գործերը որոնք, թէև դատապար-  
 տելի, իրենց հնարագիտութեամբ կը  
 գրաւեն ընթերցողի ուշադրութիւնը և  
 հետաքրքրական են նաև այն պատճա-  
 ռով որ «Խաչագողի յիշատակարան»)ին  
 մէջ յիշուած անձերէ ոմանք նշանաւոր  
 գետեր կը կատարեն յետոյ Բաֆֆիի  
 «Կայծեր»)ին մէջ. այնպէս որ «Կայ-  
 ծեր»)ի գործիչներէ մէկ ժասի նախնի  
 կեանքին և իրար հետ ունեցած նախ-  
 կին յարաբերութեան ծանօթանալու  
 համար հարկ կը լինի դիմել այս «Յի-  
 շատակարան»)ի :

Գին Ա հատորին 4 Ֆր. 20 սանթիմ  
 » Բ » 5 » 25 »

ԲԱՅՅԻ.— Ոսկի աքաղաղ (Այս վէպ կը  
 ներկայացունէ անգութ և միևնոյն ժա-  
 մանակ սնահաւատ մի վաճառականի  
 կեանքը որ խեղճ գիւղացիները վաչ-  
 խառութեամբ կողոպտելով և ալլ և ալլ

խարէու թիւններով կը հարստանայ , բայց յետոյ ինք ալ իր կարգին ուրիշներէ խարէու թեանը զո՞՛հ լինելով կը փճանայ . նոյնպէս և կանոնաւոր և աշխատասէր մի երիտասարդ վաճառականի կեանքը՝ որ աղքատութենէ բարձրանալով բարեկեցիկ վիճակի, մի կործանուած ընտանիքի վերականգնումն ու բարօրութիւնը կը կազմէ) : 3 ֆ. 50 ս. :

ՐԱՅՅԻ . — Հայ կիւնը եւ հայ երիտասարդութիւնը ( Հայ կնոջ թերութիւններ , իր ունեցած արգի վիճակի և իր կոչման մասին հատուկտոր գրուածներ տեսնուած են երբեմն երբեմն այս ու այն գրքի կամ հրատարակութեան մէջ . բայց մի մանրամաս ուսումնասիրութիւն չէր հրատարակուած : Բաֆֆին իր այս գրքի Ա մասին մէջ բազմակողմանի կերպով ուսումնասիրած է այս խնդիր . Բ մասին մէջ ալ ուսումնասիրած է հատ երիտասարդութեան , մեր այդ յուսա-

տու տարրի այժմեան դրութիւնը , աչքի առջեւ ունենալով գլխաւորապէս Կովկասի հայ երիտասարդութիւնը ) :

5 ֆրանք 25 սանթիմ :

ՐԱՅՅԻ . — Միւնք այսպէս , միւսը այնպէս . Պատկերազարդ վէպ Թիֆլիսի վաճառականների կեանքից : (Բաֆֆիի գրած այս վէպ որ իր մահէ յետոյ հրատարակուած է , կը ներկայացունէ Թիֆլիսի հայ վաճառականներէ այնպիսիների վարքն ու բարքը որոնք հին կեանքէ նոր կեանքի փոխանցման միջոցին , զուրկ մնալով թէ՛ նահապետական կեանքի պարզ ու անկեղծ բարոյական զգացումէն և թէ՛ եւրոպական կեանքի պահանջած զարգացումէն և ճաշակի ու զգացման փափկութիւններէն , մոլորուած ինկած են անբարոյականութեան ապականութիւններին մէջ . այսու ամենայնիւ իրենց կեղծաւորութեամբ իրրեւ բարեպաշտ և բարերար մարդիկ ներկայանալով ,

կը յաջողին քանդել շատերի տունը : Այս վէպի մէջ կան նաեւ ուրիշ դասակարգերի պատկանող հետաքրքրական տիպեր ալ : ) 3 ֆր. 50 սանթիմ :

ՔԱՋՈՒՆԻ Հ. Մ. — Տարերք երկրագործութեան տեսական եւ գործական ի պետս երկրագործաց եւ երկրագործական վարժարանաց : (Հայաստանցի ժողովրդին մեծամանութիւնը երկրագործութեամբ կը զբաղի . այսու ամենայնիւ երկրագործութիւնը մեր մէջ կը շարունակուի դեռ այն դրութեամբ ինչ որ էր դարեր յառաջ . գիտական կերպով ուսումնասիրուած և յառաջդիմութիւն եղած չէ այդ արուեստի մէջ մինչդեռ այժմ գիտութիւնների տարածուած լինելուն շնորհով այնպիսի միջոցներ գտնուած են Եւրոպայի և Ամերիկայի մէջ որ աւելի պակաս նեղութիւնով և ծախքով աւելի շատ արդիւնք կը քաղեն հողէն : Պէտք է գրգռել հայ ժողովրդին այդ մասի ալ

հետաքրքրութիւնը և տարածել անոր մէջ այնպիսի գիրքեր որոնք երկրագործութիւնը թէ՛ իբրև արուեստ և թէ՛ իբր գիտութիւն կը բացատրեն : Ահա այդ նպատակով է աշխարհաբար լեզուով Հ. Քաջունիի գրած այս գիրք որ կը սովորեցունէ հողի տեսակները ճանչելու կերպերը, բոյսերի գործարանական կազմութիւնը, հողը մշակելու, պարարտացնելու և արգասաւորելու զանազան կերպերը : Ունի նաեւ բազմաթիւ պատկերներ որոնք կը ներկայացունեն բոյսերի և հողագործական գործիների ձեւերը : ) 2 ֆր. 30 սնթիմ :

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՇԱՐՃՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ—L'Arménie en mouvement (Մայր-Հայաստան որ ասկէ առաջ պատկերներին մէջ կը ներկարուէր նստած և ձեռքը ծնօտին դնելով ողբացող դիրքի մէջ, այս պատ-

կերի մէջ տեղէն շարժած և ձեռքի շղթայներն կոտորտելով, ձեռքը երկընցուցած է բռնելու համար «Հայոց Հայրենասիրական Միութեան» կանոնագիրքը որի կազմակերպութիւնն իրեն աւետել կուգայ մի հրեշտակ) : Գին 1 ֆրանք (Պարսկաստանի Հայերին համար 75 սանթիմ) :

Հայ պատուիրակուբեան պատկերը (1878ին Պերլին գնացած հայ պատուիրակութեան պատկերն է, պատուիրակների անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով տպագրուած) : Գին 1 ֆրանք (0,75 սանթիմ) :

**ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳԻՐԲԵՐ**  
 Հայերին վերաբերեալ

ALISHAN P. L. — *Physiographie de l'Arménie*, 2<sup>me</sup> édition in-24 ..... 0 fr. 80

ISSAVERDENZ P. J. — *Histoire d'Arménie*, illustrée, 3 vol. in-4<sup>e</sup>, 1888. (Un livre réclamé et attendu depuis longtemps, j'ose le dire, c'est l'histoire de l'Arménie, d'un peuple qui remonte à la plus haute antiquité et que l'Eu-

rope ne connaît pas, malgré toutes les publications de quelques orientalistes spéciaux. On trouve bien quelques brochures écrites par des savants, qui ont eu à cœur de fouiller dans les documents de ce grand peuple d'Arménie ; des journaux et relations de voyages ont bien dit quelques mots sur les Arméniens et leur pays, mais une histoire proprement dite de l'Arménie manquait encore. Rév. P. Jacques D<sup>r</sup> Issaverdenz, le savant Mekhithariste de Venise, vient de combler cette lacune et de satisfaire au désir non seulement des érudits et des chercheurs, mais de tout le monde lettré, en écrivant cette histoire d'Arménie. Pour que ce nouveau livre soit accueilli avec plus d'empressement, il est illustré de 63 figures, hors texte, de différents artistes célèbres. L'édition est du format grand in-4<sup>e</sup>. Les 3 volumes ..... 105 fr.

Le même ouvrage en 2 vol. in-8<sup>o</sup>... 52 fr.

LANGLOIS (Victor). — *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*, publiée en français, sous les auspices de S. E. Nubar Pacha, et avec le concours des principaux arménistes français et étrangers. (Cette collection devait comprendre tous les historiens arméniens depuis l'antiquité jusqu'à la fin du XVIII<sup>me</sup> siècle et devait former 5 gros volumes divisés par époque ; mais la mort prématurée de V. Langlois l'empêcha d'arriver jusqu'à la fin de son but et il n'a pu faire paraître que les 2 volumes suivants :)

TOME I. 1<sup>re</sup> PÉRIODE. — Historiens grecs et syriens traduits anciennement en arménien. (MAR APAS CATINA, Histoire ancienne de l'Arménie. BARDESANE, Œuvres historiques et philosophiques. AGATHANGE, Histoire du règne de Tiridate et de la Prédication de S. Grégoire l'Illuminateur, traduction française accompa-

gnée de la version grecque et latine. FAUSTUS DE BYSANCE, Bibliothèque historique. LÉROUBNA D'ÉDESSE, Histoire d'Abgar et de la Prédication de Thaddée. ZÉNOPE DE GLAG et son continuateur JEAN MAMIGONIAN, Histoire de Daron. FRAGMENTS D'HISTORIENS GRECS PERDUS conservés dans les œuvres des écrivains arméniens).

TOME II. 1<sup>re</sup> PÉRIODE. — Historiens arméniens du V<sup>e</sup> siècle (GORIUN, Biographie de Mesrob. UN AUTEUR ANONYME DU V<sup>e</sup> SIÈCLE, Généalogie de la famille de S. Grégoire, Illuminateur de l'Arménie, et Vie de S. Nersès. MOÏSE DE KHORÈNE, Histoire d'Arménie. ELISÉE VARTABED, Histoire de Vartan et de la guerre des Arméniens. LAZARE DE PHARBE, Histoire d'Arménie. EZNIG DE GOGHP, Extrait de la Réfutation des Sectes).

Toutes ces traductions sont accompagnées de notes historiques, critiques et philologiques. Les 2 volumes..... 32 fr.

Chaque vol. séparément..... 16 fr. 50

LANGLOIS (Victor). — *Le Trésor des Chartes d'Arménie ou Cartulaire de la Chancellerie Royale des Roupéniens* : comprenant tous les documents relatifs aux établissements fondés en Cilicie par les ordres de Chevalerie institués pendant les Croisades et par les Républiques marchandes de l'Italie, etc. (Ce livre se compose de deux parties, savoir : 1<sup>o</sup> une introduction historique qui facilite l'intelligence des textes du Cartulaire, et présente sous leur vrai jour les rapports des Français avec les Arméniens, à l'époque des Guerres-Saintes, l'organisation féodale de la Cilicie, l'administration intérieure du royaume et d'autres questions curieuses à plus d'un titre et dont la valeur n'avait point encore été reconnue; 2<sup>o</sup> un

recueil de tous les privilèges, donations, traités de paix, documents officiels et notariés, émanant de la chancellerie des rois de Sis, etc.)  
16 fr.

## ԱՆԳԼԻԵՐԼԵՆ ԳԻՐՔԵՐ

### Հայերիև վերաբերեալ

ALISHAN. — *Picturesque Armenia* with 12 photographic pictures. Edition in-8°.... 9 fr.

ISSAVERDENZ J. — *Armenia and the Armenians* Being a sketch of its geography and civil History. 2<sup>a</sup> édition..... 5 fr. 50

## TABLE

	F. C.	P.
ALISHAN, Physiographie de l'Arménie .....	» 80	80
» Picturesque Armenia .....	9	» 83
ISSAVERDENZ, Histoire d'Arménie, 3 vol..	105	» 80
» le même, 2 vol..	52	81
» Armenia and the Armenians ...	5.50	83
LANGLOIS, Collection des historiens de l'Arménie, 2 vol.....	32	» 81
» Cartulaire de l'Arménie.....	16	» 82

ՅԱՆԿԸ

	Ֆ. ՍՅ.	Ե*
Աբովեանց Գ., Պատմ. Հայոց..	2 »	13
Ալիշան Հ.Ղ., Աշխարհագրութիւն Հայաստանի.....	5.50	13
» , Նուագք 5 հատոր.....	11 »	56
» , » Գ հատոր (Հայրուհի) .....	2.80	57
» , Յուշիկք Հայրենեաց..	11 »	14
» , Նշմարք Հայաստանի..	26.50	15
» , Նոյն Ա հատոր, անգլ.	9 »	15
» , Աշխրհգտթ. հայկական	» 65	21
» , Շիրակ	16 »	16
» , Սիսուան Ա. կարգի...	55 »	16
» , » Բ — ..	40 »	18
» , » Հմուտթիւն.	3.50	19
» , Այրարատ.....	100 »	19
» , Սիսական .....	75 »	21
Այվազեան Գ. Եպ., Եգիպտոսի հնութիւնները....	» 35	71
» , Կ. Պօլսի առումը..	» 35	71
» , Նիկիոլ.....	1 »	22

\* Ա սիւնակին մէջ եղած թիւերը կը ցուցնեն գրքին արժէքը: Բ սիւնակին մէջ եղած թիւերը կը ցուցնեն թէ գրացուցակին քանիերորդ էրեսին մէջ ծանօթութիւն կայ տրուած այդ գրքի վերայ:

	Ֆ. ՍՅ.	Ե.
Ապոլոարիպ , Իմ հայրասպան ընկեր .....	1 »	(»75*) 11
Առաքելեանց Հ., Պատմ. Խաչակրութեան և թագաւորութեանն Երուսաղիմայ. ....	1.50	71
Աւգերեան Հ. Մ., Առձեռն բաւարան Հայկազնեան լեզուի	10.50	63
Ա. Մ., Թիւրքիաի Հայերն և Իրենց դրացիներ..	» 50	(» 35) 4
Գամառ-Քարիպա , Բանաստեղծութիւններ...	2 »	» 58
» , Ազատ երգեր....	» 20	» 58
» , Ժողովրդական ընթերցարան.....	» 10	(» 05) 3
Գանքարեան Հ. Ս., Բառարան Գաղղ. Հայ. Տաճկ. ....	9.50	64
Գարեգին Հ. Զ., Հայերէն հին դպրութեան պատմ. ....	6 »	» 22
» , Հայերէն նոր դպրութեան պատմութիւն..	4.50	24
» , Մատենդրն. հայկական թարգմանութեանց	6 »	» 25
» , Հայկական մատենագիտութիւն.....	6 »	» 26
Գամքրան Հ. Պ., Կենդնբանութն. Երզնկեանց , Ազգային Երգա-	2.20	72

\* Փակագծի մէջ նշանակուած գիները Պարսկաստանի Հայերին համար են:

	Ֆ. ՍԳ.	Ե.
րան ձայնագրեալ... 2.80	58	
Թիւթիւննհիե Մ., Ազատու-	1.50	
թիւն Պուլիարիոյ.... (1.10)	3	
» , Հայաստանի թշուա-	1.20	
ները..... (» 90)	3	
Թեոփանեան Հ. Հ., Պատմու-		
թիւն Հայոց..... 2.30	28	
Իննիսեան Հ. Ղ., Հնարասու-		
թիւն Հայաստանի.. 43 »	30	
» , Ազգասէր .....	2.70	60
» , Ազգասէր .....	» 90	45
Լևո, Վահան Մամիկոնեան... » 70	61	
Խրիմեան Հայրիկ, Վանգոյժ... » 70	61	
Մերեց, Թորոս Լեւոնի .....	3.50	47
» , Երկունք Թ. Գարու... 3.50	45	
» , Թէոդորոս Ուտունի. 3.50	46	
Հայոց Հայրենասիրական Մի-		
ութիւն, Վարդապետարան » 15		
Հայաստանի ազատութեան (» 10)	12	
Միանսարեանց Մ., Քնար Հայ-		
կական..... 8.75	59	
Նարայի Ա. Լուսինեան, Բառ-		
գիրք Հայ-Գողղիարէն... 21 »	65	
Պայասանեան Ս., Պատմ. Հայոց 5.25	32	
Պետրոսեան Հ. Մ., Բառգիրք		
անգլիերէնէ հայերէն 22 »	66	
» , Հայերէնէ անգլիերէն 22 »	67	
Պրիւքեր, Բանալիք բնական ե-		
րեւութից..... 4 »	73	
Սարգիսեան Հ. Ներսէս, Տեղա-		

	Ֆ. ՍԳ.	Ե.
գրութիւնք ի Փոքր և		
ի Մեծ Հայոս .....	26 »	34
Սարգսեանց Լեւոն, Այց Թիւր-		
քաց Հայաստանին..... 2.10	35	
Ս.Ա., Վրէժ..... » 20		
Ստեփանեան Հ. Գ., Աշխար-	(» 15)	7
հագրութիւն..... 1.25	73	
Ստեփանէ Խորէն Վ., Մովսէս		
Խորենացու Հայկական պատ-		
մութեան աշխրհքը. Թարգմ.	6 »	36
Վակնիեր, Ճանապարհորդու-		
թիւն ի Հայաստան..... 2.30	36	
Բաճիճի, Փունջ, հատոր Բ.... 5 25	74	
» , Ոսկի աքաղաղ..... 3.50	75	
» , Ղարաբաղի աստղա-		
գէտը .....	4.20	53
» , Խաչագոյլի յիշատա-		
կարանը, Հատոր Ա.. 4.20	75	
» , Խաչագոյլի յիշատա-		
կարանը, Հատոր Բ... 5.25	75	
» , Կայծեր, Հատոր Բ... 8.50	52	
» , Կայծերի վերջը..... 1.75	52	
» , Սամուէլ..... 10 »	56	
» , Խենթը և Զալալէդ-		
գին..... 8.75	51	
» , Դաւիթ բէկ..... 10 »	48	
» , Հայ կինը և հայ երի-		
տասարգութիւնը.. 5.25	76	
» , Մինը այսպէս, միւսը		

	Ֆ. ՍՃ.	Ե.
այնպէս . . . . .	3.50	77
Փափագեանց Վ., Թոմաս Բո- ցարիս . . . . .	» 20 (» 15)	8
Փորթուգալեան Մ., «Արմէնիա»ի » յուշարար . . . . .	1.40 (1 »)	5
, Նմոյշներ ոտանա- ւորների . . . . .	» 15 (» 10)	9
» (հրտրկք.), Ազատութ. Պուլղարիոյ . . . . .	1 50 (1 10)	3
» » , Հայաստանի թշուառները . . . . .	1.20 (» 90)	3
» » . Ժողովրդա- կան ընթեր- ցարան . . . . .	» 10 (» 05)	3
» » , Թիւրքիաի Հայերն . . . . .	» 50 (» 37)	4
» » , Վրէժ . . . . .	» 20 (» 15)	7
» » , Թոմաս Բո- ցարիս . . . . .	» 20 (» 15)	8
Քաջունի Հ. Մ., Բառգիրք Ար- ւեստից և Գիտութեանց և Գեղեցիկ դպրութեանց . . . . .		67
գաղղիերէնէ Հայերէն . . . . .	50	» 70
» , Հնախօսութիւն Հայաս- տանի . . . . .	3	» 38
» , Երկրագործութիւն . . . . .	2.30	78

24.

« Ազգային գրադարան



NL0108486

